

Իրավագրան

մշակույթ

Չկա Հասարակութեան
առանց իրավունքի
Ubi societas ibi jus

Երկշաբաթեի
թիվ 10 (30)
2008 թ. հունիսի 15

ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նախագահական ընտրությունների որոշ արդյունքներ

ՀՀ նախագահական (2008 թ. փետրվարի 19) ընտրությունների արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս որոշ ճշգրտությամբ որոշելու երկրի բնակչության սոցիալ-քաղաքական կողմնորոշման ուղղվածությունը:

Ընտրարշավի սկզբում նախագահի թեկնածուների մեծ մասն ընտրողների ձայների բավականին «նախնական կապիտալ» ուներ, որը ստացել էր խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Բնական էր, որ ընտրարշավից առաջ և դրա ընթացքում նախագահի թեկնածուներից յուրաքանչյուրը համապատասխան բանակցություններ էր վարում հանրապետության որոշակի քաղաքական ուժերի հետ՝ իր թեկնածության շուրջ միավորելու համար: Նման միավորման ցայտուն օրինակ էր Հայաստանի հանրապետական կուսակցության և «Բարգավաճ Հայաստան» կուսակցության՝ նախագահի միասնական թեկնածուի առաջադրումը, որը Ս. Սարգսյանին հնարավորություն տվեց իր տրամադրության տակ ունենալ ընտրողների մոտ 660 հազ. ձայնով «նախնական կապիտալ»:

Նախագահի թեկնածուների մախընտրական արշավների կառուցվածքն ու բովանդակությունն ուսումնասիրելիս կարելի է առանձնացնել հետևյալ բնորոշ շարժառիթները, որոնք հնչել են նրանց քարոզարշավների ժամանակ:

- Իշխանության կառուցվածքում բյուրոկրատիայի և կոռուպցիայի դեմ պայքարի խոստում: Արդար հասարակության կառուցում՝ եվրոպական արժեքների հենքի վրա, դրանք հայրենական իրականության մեջ ներդրելու ճանապարհով: Իշխանության գալուց հետո քաղաքացիների կյանքի էական բարելավման և սոցիալական արդարության ապահովման խոստում (օրինակ՝ Ա. Բաղդասարյանի ընտրարշավը):

- Եակմորեն բարելավել երկրի բնակչության սոցիալ-կենցաղային պայմանները: Բարելավել գյուղի աշխատավորի կյանքը: Համաարդկային արժեքների քարոզչություն. մարդու իրավունքներ և ազատություններ (այս շարժառիթն էր ընկած Ա. Գեղամյանի և Ս. Կարապետյանի քարոզարշավների հիմքում):

- Ժողովրդավարացում երկրի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում: Հայաստանի քաղաքական դաշտում ներդրել հանդուրժողականության սկզբունքներ: Նոր խթան հաղորդել Հայաստանի արտաքին հայեցակարգին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հարցում (այս շարժառիթն էր ընկած Վ. Մանուկյանի, Ա. Հարությունյանի և Ա. Մելիքյանի քարոզարշավների հիմքում):

- Արդար հասարակություն կառուցելու խոստում: Գլխավորող քաղաքական կուսակցության պատմական դերը հայկական պետականության անկախության գործում և «Հայ դատի» պահանջների ջատագով: Ժողովրդավարական երկրի կառուցում երիտասարդության լայն ներգրավմամբ (այս շարժառիթը հիմք է ծառայել Վ. Հովհաննիսյանի քարոզարշավում):

- Հասարակական-տնտեսական պայմաններ ստեղծել երկրի բնակչության սոցիալ-կենցաղային վիճակն անընդհատ բարելավելու ուղղությամբ: Ապահովել երկրի տնտեսության հետագա աճ: Ապահովել սփյուռքի հետ կապերի հետագա ամրապնդումը (այս շարժառիթներն էին ընկած Ս. Սարգսյանի քարոզարշավի հիմքում):

- Գործող իշխանությունը համարվում է հանցավոր: Երիտասարդությունը պետք է քաղաքացիական անհնազանդության ճանապարհով ստիպի գործող իշխանությանը հեռանալ երկրի հասարակական-քաղաքական և տնտեսական բառերաբեմից (օրինակ՝ Լևոն Տեր-Պետրոսյանի քարոզարշավը):

- Սակայն նախագահական ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ հասարակությունում տեղի են ունեցել որոշակի վերախմբավորումներ: Փոխվել է քաղաքացիների վերաբերմունքը ավանդական քաղաքական ուժերի նկատմամբ:

- Տվյալները ցույց են տալիս, որ նախագահի որոշ թեկնածուների կեղծագործումը՝ հաղթողի կողմից ընտրությունների հանընդհանուր «կեղտոտ» տեխնոլոգիաների կիրառման մասին (քվեաթերթիկների «լցումներ», ընտրողներին համատարած կաշառքի բաժանում, կեղծ կամ կեղծած անձնագրերի կիրառում, «կարուսել» և այլն), մեղմ ասած, իրականությանը չեն համապատասխանում: Սակայն հարկ է նշել, որ ընտրական հանձնաժողովների շատ անդամներ իրենց մասնագիտական անիրագրելիության հետևանքով լարվածություն էին մտցնում և բախումնային իրավիճակներ ստեղծում ընտրողների, թեկնածուների վստահված անձանց և տեղական դիտորդների հետ:

- Ընտրության օրը մի շարք ընդդիմադիր ՁԼՄ-ների կողմից շրջանառվող լուրերն ընտրական օրենսգրքի լայնածավալ և աննախադեպ խախտումների մասին, մեղմ ասած, իրականությանը չեն համապատասխանում: Եվ դրա ապացույց են թեկնածուներ Ա. Բաղդասարյանի և Լ. Տեր-Պետրոսյանի ստացած ձայների քանակը, ինչպես նաև ընտրողների ձայների արտահոսքը հայրենական քաղաքական այնպիսի «վետերաններից», ինչպիսիք են Ա. Գեղամյանը, Ս. Կարապետյանը, Վ. Հովհաննիսյանը և Վ. Մանուկյանը:

- Եթե անգամ ընդունենք ընտրողների ձայների հաշվարկման ժամանակ որոշակի թերությունների առկայությունը, ապա դարձյալ պետք է փաստել, որ հասարակության հիմնական մասը քվեարկել է ներքին և արտաքին այն քաղաքականության օգտին, որը խոստացել էր իրագործել երկրի նախագահի թեկնածու Ս. Սարգսյանը: Գլխավոր հիմնավորումները, որոնք ազդեցին ընտրողների մեծ մասի ընտրության վրա, հետևյալն էին.

- Հայրենական հասարակական-քաղաքական, կառավարչական և գործարար իշխող խավի նոր սերնդի համախմբումն իր թեկնածուի շուրջը.

- Գործնականում հասարակական-քաղաքական բոլոր ուժերը հանուն ազգային շահերի համախմբման կարողությունը.

- Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի անկախության պահպանման և երկրի պաշտպանության երաշխավորվածությունը.

- Հասարակական-տնտեսական պայմաններ ստեղծել երկրի բնակչության սոցիալ-կենցաղային վիճակն անընդհատ բարելավելու ուղղությամբ: Ապահովել երկրի տնտեսության հետագա աճ: Ապահովել սփյուռքի հետ կապերի հետագա ամրապնդումը (այս շարժառիթներն էին ընկած Ս. Սարգսյանի քարոզարշավի հիմքում):

- Գործող իշխանությունը համարվում է հանցավոր: Երիտասարդությունը պետք է քաղաքացիական անհնազանդության ճանապարհով ստիպի գործող իշխանությանը հեռանալ երկրի հասարակական-քաղաքական և տնտեսական բառերաբեմից (օրինակ՝ Լևոն Տեր-Պետրոսյանի քարոզարշավը):


- Սակայն նախագահական ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ հասարակությունում տեղի են ունեցել որոշակի վերախմբավորումներ: Փոխվել է քաղաքացիների վերաբերմունքը ավանդական քաղաքական ուժերի նկատմամբ:

- Տվյալները ցույց են տալիս, որ նախագահի որոշ թեկնածուների կեղծագործումը՝ հաղթողի կողմից ընտրությունների հանընդհանուր «կեղտոտ» տեխնոլոգիաների կիրառման մասին (քվեաթերթիկների «լցումներ», ընտրողներին համատարած կաշառքի բաժանում, կեղծ կամ կեղծած անձնագրերի կիրառում, «կարուսել» և այլն), մեղմ ասած, իրականությանը չեն համապատասխանում: Սակայն հարկ է նշել, որ ընտրական հանձնաժողովների շատ անդամներ իրենց մասնագիտական անիրագրելիության հետևանքով լարվածություն էին մտցնում և բախումնային իրավիճակներ ստեղծում ընտրողների, թեկնածուների վստահված անձանց և տեղական դիտորդների հետ:

→ էջ 2

ԶԱՅՆ ՄԵԾԱՅ

Արդ, ահա ձեզ ներկայացնեմ ընդհանուր թագավորության առանձնահատկությունները: Եթե կամենում եք ազատ լինել, հավասար կերպով թագավորել ձեր երկրում, ազատորեն տեր լինել ձեր ստացվածքին, պատվի արժանանալ ձեր առաքինության համար, սրբել անօրինության կեղտերը և մաքրել ձեր խղճմտանքը, անհրաժեշտ է, որ ձեզ համար շինեք իմաստովության տներ, ըստ Սողոմոնի խոսքի՝ ձեզ համար կանգնեցնեք սյուներ՝ խորհրդականներով և ձեր բանական հոգու զորովյալմբ, համահավասար ժողովրդի կամքի ու ցանկության համաձայն, ձեզ համար ընտրեք բարի օրենքներ՝ ապրելով ու կախման մեջ մնալով ձեր օրենքներից, քանզի ոչ ոք իրավունք չպիտի ունենա իշխելու ձեզ, բացի ձեր օրենքներից:



Շահամիր Շահամիրյան

«Որդայթ փառաց»

Ա Յ Ս Հ Ա Մ Ա Ր Ո Ւ Մ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում	էջ 2
ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը իրապարակել է Հայաստանի նախագահական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցը	էջ 2
Առօրյա կիրառելի օրենքներ	էջ 3
60 տարի՝ խաղաղապահության դիրքերում	էջ 3
Գեորգ խրլոպեան. «Նոր այնթապ աւանի անուանակոչումը»	էջ 4
Թեղուտի փրկության համար պայքարը շարունակվում է	էջ 5
Մ. Մխիթարյան. «Հայ մշակույթի նվիրյալ Էլմիրա Հեքեքյանը 80 տարեկան է»	էջ 6
Ռուբեն Մարուխյան. պոեզիա	էջ 6
Գրիգոր Տաթևացի. «Ամարան հատոր». Հարության մասին ..	էջ 7
Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ	էջ 8



Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում

ԵԱՀԿ/ԺՆՄԻԳ-Ը ԵՐԱՊԱՐԱԿԵԼ Է ԸԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԵՐՋՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑԸ

ԵԱՀԿ-ի ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՆՄԻԳ) վերջերս հրապարակել է իր եզրափակիչ զեկույցը փետրվարի 19-ի 33 նախագահական ընտրությունների վերաբերյալ:



«Թեև 2008 թվականի նախագահական ընտրությունները հիմնականում համապատասխանել են ԵԱՀԿ 3այաստանի ստանդնադ պարտավորություններին և միջազգային չափանիշներին, նախընտրական և քվեարկության շրջանում լուրջ մարտահրավերներ ի հայտ եկան որոշ պարտավորությունների առնչությամբ՝ մասնավորապես ընտրությունից հետո»,- նշված է զեկույցում: «Այն ... արժեզրկեց ամբողջ ընտրական գործընթացը: Հատկապես ծայրերի հաշվարկի գործընթացում ի հայտ եկան թափանցիկության և հաշվետվության թերություններ, իսկ բողոքարկման գործընթացները լիարժեք արդյունավետ չէին»:

«Ձեկույցը առաջադրում է որոշակի առաջարկություններ 3այաստանում ընտրական համակարգի բարեփոխման ուղղությամբ՝ այդ թվում ընտրական գործընթացներում հասարակական վստահության պակասի առնչվող միջոցառումներ՝ բոլոր քաղաքացիների համար ապահովելու ուժի գործադրումից զերծ քվեարկություն, հաստատելու հստակ սահ-

կույցը գնահատում է ընտրական գործընթացները ԵԱՀԿ պարտավորությունների, այլ միջազգային չափանիշների և ազգային օրենսդրության համապատասխանության տեսանկյունից: «3այաստանում առկա են իրավական բավարար հիմքեր՝ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար. մեր զեկույցում առանձնացված թերությունները ծագում են առկա օրենքների և կանոնների արդյունավետ և անկողմնակալ գործադրման վճռակառուցման պակասի արդյունքում»,- հայտարարել է ԵԱՀԿ/ԺՆՄԻԳ-ի տնօրեն Քրիստիան Շրոտհալը: «3այաստանի ընտրական համակարգը պահանջում է ոչ այնքան հետագա տեխնիկական կամ իրավական բարեփոխումներ, որքան անհարկի պետական միջամտությունից զերծ և ԵԱՀԿ-ի չափանիշներին համապատասխանող ժողովրդավարական ընտրական գործընթացի իշխանությունների, ինչպես նաև այլ քաղաքական գործիչների իրական նվիրվածու-

թյուն»:
«Ձեկույցը առաջադրում է որոշակի առաջարկություններ 3այաստանում ընտրական համակարգի բարեփոխման ուղղությամբ՝ այդ թվում ընտրական գործընթացներում հասարակական վստահության պակասի առնչվող միջոցառումներ՝ բոլոր քաղաքացիների համար ապահովելու ուժի գործադրումից զերծ քվեարկություն, հաստատելու հստակ սահ-

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱՅՈՒՅՑ

Հունիսի 17 - Անապարացման և երազի դեմ պայքարի միջազգային օր

Հունիսի 20 - Փախստականների միջազգային օր

Հունիսի 23 - ՄԱԿ-ի հանրային ծառայության օր

Հունիսի 26 - Թմրանյութերի չարաշահման և ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օր

Հունիսի 26 - Խոշտանալուների դեմ պայքարի միջազգային օր

մանագատում պետական կառույցների և իշխող քաղաքական կուսակցության միջև»,- աված է ԵԱՀԿ-ի հաղորդագրությունում:

Մարդու իրավունքների մրցանակ՝ հոնկոնգցի փաստաբանին

Հոնկոնգցի փաստաբան Այ Մայնթը պարգևատրվել է Մարդու իրավունքների եվրոպական հեղինակավոր մրցանակով՝ ծայրահեղ վտանգավոր պայմաններում աշխատանքային իրավունքների պաշտպանության համար:



Այ Մայնթը, ով Բուրմայում ձևավորել է իրավապաշտպան խումբ՝ կանխելու հարկադիր աշխատանքի դեպքերը, անօրինական հողային բռնազավթումները և աշխատողների իրավունքների ոտնահարումները, 2008 թ. մայիսի 17-ին պարգևատրվեց եվրոպական իրավաբանների «Լյուդովիկոս 3-րդ» մարդու իրավունքների միջազգային մրցանակով:

«Այ Մայնթի և նրա մեծ անհատների աշխատանքի կարիքն զգացվում է ավելի քան երբևէ»,- ասել է Մարդու իրավունքների ասիական հանձնաժողովի գործադիր տնօրեն Բ. Ֆերնանդոն:
«Լյուդովիկոս 3-րդ» մրցանակը հանձնվում է 1984 թ.-ից եվրոպական իրավաբանների մարդու իրավունքների հաստատության կողմից: Այն անվանվել է ի պատիվ Ֆրանսիայի նախկին արդարադատության նախարարի, ով քաղաքացիների և մարդու իրավունքների պաշտպանության ֆրանսիական լիգայի հիմնադիր անդամը և առաջին նախագահն էր:

Ռուսաստանում դատական որոշումների մեծ մասը մնում է անկատար

Դատավորների և փաստաբանների անկախության հարցերով ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցիչ Լեանորո Դեսպոնին իր զեկույցում հայտարարել է, որ Ռուսաստանում վերջին տարիներին տեղի են ունեցել զգալի փոփոխություններ, սակայն մտահոգություն է հայտնել դատական համակարգի օղակների գործառնության թերությունների առնչությամբ, որոնց վերացումն անհրաժեշտ է երկրի հետագա զարգացման համար: Մտահոգիչ է այն փաստը, որ օրենքի առաջ հավասարության սկզբունքը և հավասար հնարավորությունները ապահովված չեն, իսկ դատական որոշումների մեծ մասը մնում է անկատար:



արդյունաբերության ցուցահանդես:

Համաժողովը նվիրված է կլիմայական փոփոխությունների, համընդհանուր տաքացման ուղորտներում տեղեկատվության հարցերին: Համաժողովին կմասնակցեն աշխարհի տարբեր երկրների պատվիրակներ, որոնք ներկայացնում են ակադեմիական հաստատությունները, ոչ կառավարական կազմակերպությունները, ինչպես նաև կառավարությունները: Կլիմայական փոփոխությունների գիտական ուսումնասիրությունների վերջին զարգացումների մասին իրազեկվելու ցանկություն ունեցող պատվիրակները կարող են լսել դասախոսություններ, որոնց կհաջորդեն բաց քննարկումներ ճանաչված գիտնականների հետ: Բացի վերոնշյալ քննարկումներից՝ Հայր Պարկի հյուրանոցը կարամարի շուրջ 100 ցուցահանդեսային տաղավարներ, որտեղ տրանսպարտային, էներգետիկ, նավթային ընկերությունները կներկայացնեն կլիմայի համընդհանուր բարեփոխմանը նպաստող իրենց ծրագրերն ու արտադրանքները:

Ձախողման 60 տարիներ...

«Միջազգային համայնքում» իրավապաշտպան կազմակերպությունն աշխարհի ղեկավարներին առաջարկել է մարդու իրավունքների պաշտպանությունն ամբողջ վեց տասնամյակ ծախողելու համար ներողություն խնդրել: Անարդարությունը, անհավասարությունն ու անպատեխությունը դարձել են այսօրվա խարանգը:
Կառավարությունները պետք է ամեն ինչ անեն՝ տրված խոստումներին և դրանց իրականացման միջև եղած անդունդը վերացնելու համար: «Միջազգային համայնքում»-ի 2008 թվականի զեկույցը ցույց է տալիս, որ առնվազն 81 երկրներում մարդիկ դեռևս խոշտանգվում են, 54 երկրներում՝ զոհ դառնում անարդար դատավարությունների, իսկ առնվազն 77 երկրներում չեն կարողանում ազատ արտահայտվել: «Միջազգային համայնքում» զգուշացնում է, որ մարդու իրավունքներին սպառնացող մեծագույն վտանգը համընդհանուր տեսլականի և համագործակցային առաջնորդության բացակայությունն է:

Սեռական ոտնձգություններ երեխաների նկատմամբ՝ խաղաղապահների, մարդասիրական կազմակերպությունների աշխատակիցների կողմից

Միացյալ Թագավորության «Փրկե՛ք երեխաներին» կազմակերպության նոր զեկույցի համաձայն՝ հակամարտությունների գոտի հանդիսացող երկրներում ապրող երեխաները վախենում են իրավապահ մարմիններին հայտնել ՄԱԿ-ի խաղաղապահ զորքերի և մարդասիրական օգնության որոշ աշխատակիցների կողմից կատարվող սեռական ոտնձգությունների դեպքերի մասին:
Հարցված երեխաները հայտնել են, որ իրենց սպառնացել են և պատվիրել լռել կատարվածի մասին, այնպես օգնության գործակալությունները կրադարեն աջակցել նրանց:
Ձեկույցից պարզ է դառնում, որ նման իրավախախտների կարելի է հանդիպել նաև մարդասիրական և խաղաղապահ գործունեություն ծավալող տարբեր կազմակերպություններում:

Նախաձ ահական ընտրությունների որոշ արդյունքներ

← էջ 1

- Հավատը կանա-ընտանեկան և կորպորատիվ խմբավորումների դեմ (որոնք ներկայումս կառավարում են երկրի և նրա մարզերի տնտեսության առանձին ոլորտներ) պայքարը ղեկավարելու կարողության հանդեպ:
- Երկրի տնտեսության մի շարք ճյուղերում նկատվող կայունությունն ու աշխուժությունը:
- Ընտրարշավի ընթացքում բնակչության մի շարք սոցիալ-կենցաղային խնդիրների օպերատիվ լուծումը:
- Գործադիր իշխանության կառույցներում պետական կարգապահության հաստատման ցանկությունն ու ձգտումը:
- Բնակչության հետ բաց շփումն ու անմիջականությունը:

Ընտրազանգվածի զգալի մասի համար Լ. Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկելու համար շարժառիթ էր հանդիսացել նրա խոստումը հասարակությունն անհապաղ ազատելու իշխանության կառույցների այն ներկայացուցիչներից, ովքեր իրենց իշխանությունն օգտագործում էին շահադիտական նպատակներով: Պակաս կարևոր չէր նաև այն փաստը, որ ընտրազանգվածի որոշ մասը կազմում էին նրանք, ովքեր «վիրավորված էին» 1998 թ. իշխանափոխության ժամանակ իրենց պաշտոնները կորցնելու պատճառով: Դա հիմնականում Հայոց համազգային շարժման (ՀՀԾ) միջին օղակն էր:
«Բողոքավոր» ընտրազանգվածի ճնշող մեծամասնությունը կազմում էր հասարակայնորեն չպահանջված երիտասարդությունը, որը ևս միատարր չէր: Մի մասը կիսաքրեական էր, մյուս խմբի մեջ մտնում էին «էլիտար» երիտասարդության ներկայացուցիչները (նրանց այդպես էր անվանում Լ. Տեր-Պետրոսյանը), որոնք իրենց համարում էին ինտելեկտուալներ: Հարկ է նշել նաև, որ «բողոքավոր» ընտրազանգվածի զգալի մասը կազմում էին 50 և ավելի տարիք ունեցող անձինք, ովքեր տարիքի և սոցիալական դրության պատճառով գործնականում կորցրել էին իրենց հավատը վաղվա օրվա հանդեպ:
Ասել, թե մեր հայրենիքում առկա են ինչ-որ հասարակական-քաղաքական արժեքներ, սխալ կլիներ: Մեր հասարակությունը բաժանվել է երկու մասի. մի մասը հույս ունի արմատական դրական փոփոխությունների, իսկ երկրորդը պատրաստ է համախմբվել ցանկացած առաջնորդի շուրջ, ով պատրաստ է գլխավորել նրա հեղափոխական քանդող ներուժը:
Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև այն շարժառիթը, որով ղեկավարվել է ընտրողների զգալի մասը Ա. Բաղդասարյանի օգտին քվեարկելիս: Այս թեկնածուի օգտին քվեարկել էին հիմնականում փոքր քաղաքների և գյուղական բնակավայրերի ընտրողները: Նախընտրական արշավի ժամանակ չափազանցված խոստումներն ուժեղ տպավորություն թողեցին գյուղական մտավորականության և գյուղի աշխատավորների վրա, ովքեր Ա. Բաղդասարյանի Ազգային ժողովում նախագահելու ընթացքում գյուղական համայնքների գյուղապետերի և քաղաքային կազմավորումներում ղեկավար պաշտոններ էին զբաղեցնում:
Սա մեկ անգամ ևս վկայում է, որ ՀՀ Նախագահի ընտրությունները հիմնականում չէին կրում թեկնածուների հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական դիրքորոշումների պայքարի բնույթ, այլ հանգեցրին որոշ խմբավորումների անձնական շահերի պաշտպանության, ովքեր, օգտագործելով միջին վիճակագրական ընտրողի հասարակական հոգեբանության բաղադրիչը, ոչ ճիշտ տեխնոլոգիաներով և մեթոդներով ձևավորեցին իրենց ընտրազանգվածը:

ԱՌՈՐՅԱ ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՔՆԵՐ

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ
ԷԼԵԿՏՐԱԲԵՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ԽԱՆՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սեփական իրավունքների չիմացությունն իսկապես դրանց բացակայությանը համագոր է: Ցավոք, Հայաստանում քիչ չեն սպառողների իրավունքների խախտումների դեպքերը՝ պայմանավորված հիմնականում իրավական ոչ բավարար իրազեկության մակարդակով:

Սպորտը ներկայացնում էնք էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների հիմնական դրույթները՝ դրանց խախտման դեպքում համապատասխան փոխհատուցում պահանջելու հնարավորության մասին: Սակայն միաժամանակ ցավով ենք նշում, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, հնարավոր փոխհատուցման չափը սահմանելով «ոչ ավելի, քան 1.500 դրամ», մեծապես նվազեցրել է կանոնների կիրառելիությունը: Այնուամենայնիվ, քաղաքացին, սպառողը կկարողանա այս լծակն օգտագործելով որոշակիորեն և սկզբունքայնորեն, ոչ թե հարկապես հանուն փոխհատուցման պաշտպանել իր իրավունքները:

Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N 358 և որոշմամբ հաստատված «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների» էլեկտրամատակարարող ընկերությունը պարտավոր է սպառողին, նրա գրավոր դիմումի հիման վրա, վճարել տույժ՝ ծախսված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի 50%-ի չափով, բայց ոչ ավելի, քան 1500 դրամը, այն դեպքերում, երբ խախտվել է՝

• Էլեկտրամատակարարման պլանային ընդհատման համար սահմանված ժամկետը:

Մատակարարը սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ժամը 9:00-ից 17:00-ը ընկած ժամանակահատվածում:

• Էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատումից հետո սահմանված ժամկետում սպառողի էլեկտրամատակարարման վերականգնման ժամկետը:

Մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել արտապլանային ընդհատման պահից ոչ ուշ, քան՝

ա) ՀՀ ողջ տարածքում՝ 2 ժամում, եթե սպառողի էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 (10) ԿՎ և բարձր լարման 1-ից ավելի առանձին օդային կամ մալուխային գծերով էլեկտրակալային կամ ենթակալային երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից, և 16 ժամում, եթե սպառողի էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 (10) ԿՎ և բարձր լարման մեկ օդային (մալուխային) գծով:

բ) ՀՀ քաղաքային համայնքների բազմաբնակարան շենքերի սպառողների հա-

մար՝ 2 ժամում, իսկ 0,4 ԿՎ և ցածր լարման այլ սպառողների համար՝ 8 ժամում:

գ) ՀՀ գյուղական համայնքների բազմաբնակարան շենքերի սպառողների համար՝ 8 ժամում, իսկ 0,4 ԿՎ և ցածր լարման այլ սպառողների համար՝ 16 ժամում:

• Առևտրային հաշվիչից անմիջապես հետո տեղադրված ավտոմատի անջատման դեպքում սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել վերջինիս կողմից ոչ ուշ, քան՝

ա) 2 ժամում՝ ՀՀ քաղաքային համայնքներում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրվա ընթացքում:

բ) 4 ժամում՝ ՀՀ գյուղական համայնքներում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրվա ընթացքում:

գ) 16 ժամում՝ ՀՀ ողջ տարածքում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրերից դուրս:

Սպասարկման օրերը տարվա բոլոր օրերն են, բացառությամբ կիրակի օրերի, ժամը 9:00-ից 17:00-ը:

• Վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում մինչև սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելու ընթացակարգը:

Վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝ առնվազն 3 օր առաջ հեռուստատեսությամբ կամ սպառողին հասու այլ ձևերով (հայտարարություն փակցնելով շքանուշերում, փոստային բաժանմունքներում և այլն) զգուշացնելուց հետո: Զգուշացումը հեռուստատեսությամբ պետք է կատարվի հանրապետա-

կան նշանակության մետրային հեռարձակում ունեցող 2 հեռուստաալիքով 2-ական անգամ՝ 18:00-ից 20:00-ը և 20:00-ից 23:00-ն ընկած ժամանակահատվածներում:

• Վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելուց հետո այն վերականգնելու համար սահմանված ժամկետը:

Մատակարարը սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելուց հետո սպասարկման օրերին պարտավոր է այն վերականգնել ոչ ուշ, քան՝

ա) նույն օրը՝ մինչև ժամը 17:30-ը, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել մինչև տվյալ օրվա ժամը 14:00-ն, կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստացել է հավաստի տեղեկություններ, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը:

բ) հաջորդ օրը՝ մինչև ժամը 13:00-ն, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել տվյալ օրվա ժամը 14:00-ից մինչև 17:30-ը, կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստացել է հավաստի տեղեկություններ, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը:

• Սպառողի կողմից վճարման փաստաթղթում կամ հաշվի մեջ գրառումների սխալ հայտնաբերելու դեպքում սահմանված ընթացակարգը:

Սպառողը վճարման փաստաթղթում կամ հաշվի մեջ գրառումների սխալ հայտնաբերելու դեպքում գրավոր դիմում է մատակարարին՝ սխալն ուղղելու պահանջով: Մա-

տակարարը սպառողի դիմումն ստանալու օրվանից՝ 5, իսկ լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտության դեպքում՝ 15 սպասարկման օրվա ընթացքում պարտավոր է ստուգել իր գրառումները և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել սպառողին:

• Սպառողի կողմից առևտրային հաշվիչի սխալ աշխատանքի հայտնաբերման դեպքում սպառված էլեկտրաէներգիայի վերահաշվարկման համար սահմանված ընթացակարգերը:

Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ առկա է սպառված էլեկտրաէներգիայի քանակության սխալ գրանցում, մատակարարը կատարում է սպառված էլեկտրաէներգիայի քանակության և արժեքի վերահաշվարկ: Վերահաշվարկը կատարվում է սխալ գրանցման պատճառը վերացնելու պահից մինչև առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի վերջին գրանցման օրն ընկած (31 օրից ոչ ավելի) ժամանակահատվածի համար:

• Սպառողի պահանջով առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման համար սահմանված ընթացակարգերը:

Առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտությունը սպառողի պահանջով իրականացվում է նրա գրավոր դիմումի համաձայն: Սպառողի դիմումը ստանալուց ոչ ուշ, քան 10 սպասարկման օրվա ընթացքում մատակարարը պարտավոր է ստուգել սպառողի առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտությունը՝ նրան ներկայացնելով դրանց աշխատանքի ճշտության մասին գրավոր եզրակացություն:

Սպառողն իրավունք ունի նաև առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտությունը սեփական միջոցների հաշվին պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների:

• Սպառողի պահանջով առևտրային հաշվառքի սարքերի փոխարինման համար սահմանված ընթացակարգերը:

Մատակարարը սպառողի դիմումը և կանխավճարի վճարումը հավաստող փաստաթուղթը ստանալուց հետո 10 սպասարկման օրվա ընթացքում պարտավոր է փոխարինել նրա առևտրային հաշվառքի սարքերը:

• Սպառողի դիմում-բողոքին պատասխանելու համար սահմանված ժամկետը:

Մատակարարը սպառողի դիմում-բողոքին պարտավոր է պատասխանել այն ստանալու պահից առնվազն 15 սպասարկման օրվա ընթացքում, եթե առանձին դեպքերի համար կանոններով այլ ժամկետ սահմանված չէ:



60 ՏԱՐԻ՝ ԽԱՂԱՂԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

ՄԱԿ-ի լիավոր քարտուղարի ուղերձը

Այս տարի ՄԱԿ-ի խաղաղապահների միջազգային օրը նշվեց ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեության 60-ամյակը: Վեց տասնամյակ առաջ՝ 1948 թ. մայիսի 29-ին, Անվտանգության խորհուրդը կատարեց խաղաղապահ առաջին առաքելությունը: Խաղաղապահների մեծ մասը եվրոպական ու ամերիկյան երկրներից էին՝ հիմնականում անգլերեն զինվորականներ, որոնք հրադադարի գծերում դիտորդական և վերահսկման աշխատանք էին կատարում:

Այդ օրից ի վեր խաղաղապահությունը դարձել է ՄԱԿ-ի գործունեության առաջատար ուղղություններից մեկը: Այսօր աշխարհի բախումնային գոտիներում աշխատում են ավելի քան 110.000 տղամարդ և կին շուրջ 120 երկրներից: Նրանք ենթակա-

յացնում են մեծ ու փոքր, հարուստ ու աղքատ երկրներ, իսկ մի մասն էլ պատերազմից վերջերս տուժած երկրներից են: Նրանք տարբեր մշակույթների, ներկայացուցիչներ են, սակայն նրանց միավորում է խաղաղությանը նպաստելու վճռականությունը:

Խաղաղապահները վերապատրաստում են ոստիկաններին, զինաթափում նախկին մարտիկներին, օժանդակում ընտրություններին և օգնում հիմնել պետական հաստատություններ: Նրանք կառուցում են կամուրջներ, նորոգում դպրոցներ, օգնում ջրհեղեղներից տուժածներին, պաշտպանում կանանց սեռական բռնություններից: Նրանք պաշտպանում են մարդու իրավունքները և խթանում սեռերի հավասարությունը:

Խաղաղապահների ջանքերի շնորհիվ հնարավոր է դառնում մարդասիրական փրկարար օգնությունը հասցնել մարդկանց և տնտեսական զարգացման կայուն հիմքեր դնել:

Անցյալ տարի ես այցելեցի խաղաղապահներին Աֆրիկայում, Ասիայում, Միջին Արևելքում և Կարիբյան տարածաշրջանում: Տեսա, թե ինչպես են փախստականները տուն վերադառնում, երեխաները դարձյալ դպրոց են հաճախում, քաղաքացիական բնակչությունը իրեն վերստին ապահով է զգում օրենքի տիրապետության պայմաններում: Տեսա, թե ինչպես են համայնքները խաղաղապահների օգնությամբ հառնում ավերակներից: Մենք չէինք կարողանա այս գործը կատարել առանց տարածաշրջանային կազմա-

կերպությունների մեր գործընկերների: Աֆրիկայում միությունը և ՄԱԿ-ը Դարձրում տեղական ինքնակառավարման համատեղ ուժերը: Իսկ Եվրամիության հետ աշխատում ենք հարևան Չադում և Կենտրոնական Աֆրիկայում Հանրապետությունում:

ՄԱԿ-ի անդամ երկրների կեսից ավելին գործ և ոստիկաններ է տրամադրում խաղաղապահ գործունեության համար: Մենք երախտապարտ ենք նրանցից յուրաքանչյուրին:

ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեության 60-ամյակի տարեդարձը նշելու հետ մեկտեղ պետք է նաև սզալ մարտերում ընկած մեր գործընկերների մահը: Անցած վեց տասնամյակների ընթացքում զոհվել են ավելի



քան երկու հազար չորս հարյուր տղամարդ և կին՝ իրենց կյանքը նվիրելով խաղաղության գործին:

Նրանցից յուրաքանչյուրը հերոս է: Այսօր մենք նորից ենք պարտավորվում ապահովել, որ նրանց գոհողությունը չմոռացվի, և կապույտ սաղավարտավորների գործը շարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ կա դրա անհրաժեշտությունը:

ՊԱՆ ԳԻ ՄՈՒՆ

ՆՈՐ ԱՅՆԹԱՊ ԱԻՆԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒՄԸ

Հայրենիք-սփիւռք յարաբերութիւնների խորացման, հայրենադարձութեան ընթացքի ծաւալման, հայ պահանջատիրութեան գիտակցութեան ուժեղացման զուգահեռ եւ Յեղասպանութեան 50-ամեակից յետոյ խորհրդային Յայաստանում արմատաորուեց պատմական Յայաստանի ու Յայկական Կիլիկիայի բնակավայրերի անուաններով բնակավայրեր հիմնադրելու սովորութիւնը: Ինչպէս համանման այլ հարցերում, այս դէպքում եւս լռելեայն ու քողարկուած ձեւով միաձուլուած են երկու միտումներ՝ մի կողմից սփիւռքից նիւթական միջոցներ եւ զաղափարական-քաղաքական լծակներ ձեռք բերելու պաշտօնական բոլշեւիկեան ցանկութիւնը, միւս կողմից՝ հայրենասէր հայութեան ակնկալութիւնները (չմոռանալ բռնազրաւուած բնօրրանը, վառ պահել պահանջատիրական գիտակցութիւնը, հայրենասիրական ոգով դաստիարակել նոր սերունդը, շեշտել ցեղասպանութեան իրողութիւնը եւ կենդանի պահել հայ ազատագրական պայքարի ոգին):

Այսպիսով, ժամանակի ընթացքում որորդային Յայաստանում կեանք առան Նոր Արաբկիր, Նոր Արմաւիր, Նոր Այնթապ, Նոր Բալու, Նոր Գեղի, Նոր Երզնկա, Չէթուն, Նոր Թամարզա, Նոր Խարբերդ, Նոր Կեսարիա, Կիլիկիա, Նոր Յաճն, Նոր Մալաթիա, Մարաշ, Մուսալեռ, Նոր Սեբաստիա եւ այլ բնակավայրեր:

Յայաստանաբնակ այնթապցի որոշ մտաւորականների եւ սփիւռքի Այնթապի հայրենակցական միութիւնների ղեկավարների հանդիպումներից ծնունդ է երեւանում Այնթապի հայրենակցական միութիւն ստեղծելու գաղափարը: Այդ մասին Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէին մախ հաղորդեցին սփիւռքահայերը, ապա հայրենաբնակները: Պարզուեց, որ Այնթապի մասին կոմիտէի ղեկավարութեան տեղեկութիւններն այնքան էլ հարուստ ու հաւաստի չեն: Անհրաժեշտ եղաւ յաղթահարել որոշ անհատների տուած ապակողմնորոշիչ տեղեկութիւններն այն մասին, որ Այնթապի հերոսամարտի զինուորական ղեկավար Ատուր Լեւոնեանն անգլիական հետախուզութեան սպայ է, որ այնթապցիները մեծ մասամբ դուրս են «Յայաստանեան» ճակատից: Շուտով համատեղ աշխատանքի ընթացքում վերագործեց Այնթապի հերոսամարտի միասնութեան եւ հայրենասիրութեան ոգին: Սփիւռքահայ այնթապցիները, անկախ իրենց դաւանական ու կուսակցական պատկանելութիւնից, իրենց բարոյական ու նիւթական լուծման ներդրին Նոր Այնթապի ստեղծման ու այդ աւանում գործարանի կառուցման գործում: Շուտով Յայաստանի պատմական քանգարանում իրենց տեղը գրաւեցին Այնթապի հերոսամարտի ղեկավար Ատուր Լեւոնեանի սուրը, մեղաւներն ու այլ իրերը:

Ն. Ս. Օ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Տ. Տ. Բաբգէն Կիլիկեանի, Բաբգէն Սրբազան Ապատեանի (Ն. Ս. Օ. Վազգէն Ա ամենայն հայոց կաթողիկոսի պատուիրակ Յարաւային Ամերիկայի), Տիրան արքեպիսկոպոս Ներսոյեանի, Վեր. Տիգրան Խրլոպեանի, Աւետիս Գալեմբարեանի, դոկտ. Գեորգ Սարաֆեանի, Սարգիս Պալապանեանի (Պալապան Խոճա), Լեւոն Լեւոնեանի (Թ. Լեւոն), Գեորգ Պարտազեանի (Ֆրանսա), Գրիգոր Պողարեանի (Լիբանան), Տիգրան Միւրաբեանի (Արժեմթիւն), Կարապետ Միւլախեանի (ԱՄՆ), Արմէն Յարութիւնեանի (Պէրու), Լեւոն Վարդանի (Լիբանան), բժիշկ Ռուբէն Գեպեճեանի (Սուրիա), Գեորգ Մոմճեանի (ԱՄՆ) եւ այլ այնթապցի երեւելիների կենսագրութեան ու գործունէութեան ծանօթացումը մեծապէս նպաստեց աշխարհասփիւռ այնթապցիների մասին դրական կարծի-

քի ձեւաւորման:

Անհրաժեշտ եղաւ նաեւ պայքարել այն տեսակետի դէմ, որ խորհրդային Յայաստանում անթոյլատրելիօրէն շատանում են թուրքիայում գտնուող հայաբնակ բնակավայրերի վերանուանումներն ու այդ վայրերի բնակիչների մղած ազատագրական պայքարի ու այդ պայքարում հերոսաբար զոհուածների յուշարձանները:

Գտնուեցին նաեւ անհատներ, որոնք պնդեցին, թէ սփիւռքահայ նոր սերունդին չի հրապուրի արդի թուրքիայում գտնուող եւ անցեալում եղած հայաշատ քաղաքների պատմութիւնը, անցեալով ապրելու միտումը: Կեանքը հերքեց նման հարցադրումը: Ուրիշներ գտան, որ աւելի ճիշդ կը լինի «կորսուած» ամեն մի հայ բնակավայրի անունը Յայաստանում վերակենդանացնելու եւ այնտեղ փոքր գործարաններ կառուցելու փոխարէն միջոցներ միացնել ու հայրենիքում մեծ ձեռնարկութիւններ հաստատել: Նրանք հայրենակցական միութիւնների մօտեցումը նկատեցին որպէս միջոցների անհմատ փոշիացում եւ խտոր համընդհանուր, համազգային, համահայկական մտածողութեան ու ծրագրերի ծաւալման:

Նման արգելակներ յաղթահարել են նաեւ միւս հայրենակցական միութիւնները, որոնք ձգտել են իրենց բնօրրանի անունը յատկացնել հայրենիքում ու այնտեղ կառուցել յուշակոթողներ:

Կոմիտէի համաձայնութիւնը ստանալուց յետոյ կազմուեց վարչութիւն հետեւեալ կազմով՝ ատենապետ, Արթուր Յատիտեան («Էջմիածին») ամսագրի խմբագիր, փոխատենապետ, դոկտ. Գեորգ Խրլոպեան (Երեւանի համալսարանի պրոֆեսոր), ատենադպիր Եղիա Տուպալեան (վաստակաշատ մանկավարժ, գրող), խորհրդականներ՝ գիտ. թեկնածու Ալպերդ Աղամանուկեան (պոլիտեխնիկ ինստիտուտի դոցենտ), Մետրոպ Մետրոպեան (խմբավար, մանկավարժական ինստիտուտի դոցենտ), բժիշկ Խաչիկ Սիւլախեան, Ենոք Կրպոյեան (ատամնատեխնիկ), Լեւոն Գարամանուկեան (Երեւանի քաղսովետի ճարտարապետական բաժնի ինժեներ), Անդրանիկ Դեմիրճեան (ինժեներ), Ճօրճ Կարապետեան (վարչութեան սիրելի հայրիկը, Պաղեստինի կոմկուսի վետերան), Ներսէս եւ Վահան Նալբանդեան եղբայրներ (Ղեկավար աշխատողների դերձակատան աւագ վարպետներ), Աւետիս Փոստաճեան (կաթողիկոսարանի «Յայկաշէն» ամառանոցի տեսուչ):

Վարչութեան անդրանիկ միտք տեղի ունեցաւ Տուպալեանների տանը: Այնտեղ որոշուեց մախ հայցել ամենայն հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Վազգէն Ա-ի օրհնութիւնը: Վեհափառ հայրը ոչ միայն ընդառաջեց, այլեւ ներկայ գտնուեց Յայաստանի ԱՅՄ գրեթէ բոլոր հաւաքներին: Նրա հետ էր լինում նաեւ Լուսինէ Չաքարեանը, ով ոգեշնչում էր ներկայներին իր երգերով:

Այնթապցիական այդ հաւաքները կազմակերպուած էին Այնթապի հերոսամարտի տարելիցներին, արտերկրից Յայաստան ժամանած այնթապցի մտաւորականներին ու ականաւոր գործիչներին պատուելու համար: Մեծ շուքով նշուեցին Թագազիւղ աւանի Նոր Այնթապ անուանակոչութիւնը, Նոր Այնթապի գործարանի բացումը, վաստակաշատ մանկավարժ եւ հասարակական գործիչ Գրիգոր Պողարեանի յղբելանը, սուրիական բանակի պաշտօնաթող գեներալ, իրաւաբանական գիտութիւնների դոկտոր Արամ Գարամանուկեանի յարգանքի երեկոն, Տիգրան Միւրեբեանի հրաւերով հայ-արժեմթիւնեան բարե-

կամութիւն ամրապնդելու համար երեւանում գտնուող արժեմթիւնացի երգչուհի Լուիտա Թորեզին նուիրուած ձեռնարկը:

Երկրորդ. որոշուեց հաւաքական ուժերով կազմել հայաստանաբնակ այնթապցիների ցուցակը: Դրանով նրանք հրաւիրուած էին ընդհանուր ձեռնարկներին ու հաւաքներին: Օրակարգի երրորդ կէտը վերաբերում էր սփիւռքաբնակ այնթապցիների ու նրանց կազմակերպութիւնների հետ յարաբերութիւնների սերտացման հարցերին: Յանձնաժողովի բոլոր անդամները տեղեկատու մամակներ ու յօդուածներ ուղարկեցին սփիւռքի իրենց ազգականներին ու բարեկամներին: Այդ ասպարէզում գերազանց աշխատանք կատարեցին Եղիա Տուպալեանն ու Ենոք Կրպոյեանը: Շուտով սփիւռքահայ մամուլում սկսեցին երեւալ վարչութեան աշխատանքներին ու հայաստանաբնակ այնթապցիներին նուիրուած յօդուածներ: Մեծացաւ Յայաստան այցելող սփիւռքահայ այնթապցիների թիւը: Յաճախ ժողովներին իրենց գործօն մասնակցութիւնն էին բերում նաեւ արտերկրից երեւան այցելող այնթապցիներ:

Բացի Տուպալեանների բնակարանից՝ ժողովներ գումարուեցին նաեւ Նալբանդեանների, Կրպոյեանների, Գարամանուկեանների եւ Դեմիրճեանների բնակարաններում:

Մեծ նուիրումով եւ խանդավառութեամբ աշխատեցին սփիւռքի Այնթապի հայրենակցական միութիւնների տեղական մարմինները: Ի մասնաւորի յիշատակութեան արժանի են Պէրոյի, Յալեպի, Փարիզի, Մարսելի, Նիւ Եորքի, Պոսթոնի, Պուլմոս Այրեսի վարչութիւնները:

60-ական թուականների վերջում հասունացել էր Յայաստանում Նոր Այնթապ անունով բնակավայր անուանակոչելու հարցը: Խնդրանքը ներկայացուեց Սփիւռքահայութեան հետ մշակութային կոմիտէի ղեկավարութեան: Վերջինս հասկացողութեամբ մօտեցաւ խնդրանքին: Բայց կոմիտէի նախագահի տեղակալ Անդրէ Մարտիրոսեանը նկատել տուեց, որ նման հարցի լուծումը ենթադրում է այդ բնակավայրում նշանակալից արտադրական կարողութեան հաստատութիւն կառուցելու պարտաւորութիւն ստանձնումը: Մեր սփիւռքահայ եղբայրները, առանց տատանումի, դրականօրէն արձագանգեցին ու ամփոջապէս լծուեցին գործին: Շուտով հաւաքեցին աւելի մեծ գումար, քան ակնկալուած էր: Նոր Այնթապով ոգեւորուած՝ արտերկրի որոշ այնթապցիներ պարտաւորութիւններ յայտնեցին գործարաններ կառուցել հայրենիքում կամ առեւտրական գործարքներ սկսել: Բելգիահայ Մելամթոն Ալանեանն առաջարկեց տասը միլիոն արժողութեամբ աղամանի գործարան հիմնել Յայաստանում, իր հաշուին արտասահմանում վարպետներ պատրաստել ու մշակուած աղամանը միջազգային արժեքով գնել Յայաստանից: Երուանդ Լօշխաճեանն առաջարկեց Յայաստանից գնել այն, ինչ նա դժուարանում է վաճառել, ու Յայաստանին վաճառել այն, ինչ նա դժուարանում է գնել արտասահմանում:

Աշխարհասփիւռ այնթապցիների գիտակցութեան մէջ բացաւորուող հայրենասիրական ոգին վառ պահելու եւ գործարանի համար ծաւալուող դրամահաւաքը խթանելու համար որոշուեց շուտով՝ 1970-ի աշնանը, կատարել Նոր Այնթապի անուանակոչումը:

Որոշուեց Նոր Այնթապ մկրտել երեւանի արուարձանում եւ Նոր Խարբերդի հարեւանութեան գտնուող Թագազիւղ աւանը, որը հիմնադրուել էր 1862-ին

Իրանի Ուրմիա գաւառից գաղթած մի խումբ հայերի կողմից: Սոյն ընտրութիւնը հիմնադրուեց հետեւեալ փաստարկներով. 1) Աւանը երեւանի մօտ է եւ զբօսաշրջիկները հեշտութեամբ կարող են այցի գնալ այնտեղ. 2) Աւանի բնակչութիւնը մշակուած է հին Այնթապը յիշեցնող գիւղատնտեսական ապրանքներ. 3) Աւանը ջրառատ է ու բերքատու հող ունի. 4) Յայաստանում շատ կան Թագազիւղ կոչուող այլ բնակավայրեր: Անհրաժեշտ է դրանք նուագեցնել. 5) Աւանի անուանումը հայկական չէ, եւ ուշ կամ կանուխ այն պէտք է փոխուի: Անուանափոխութեան ժամանակ աւանն ուներ 5.600 բնակիչ, միջնակարգ դպրոց, մշակոյթի տուն եւ բուժարան:

Սփիւռքի Այնթապի հայրենակցական միութիւնները որոշում են սեպտեմբերի սկիզբներին ուխտագնացութեան գալ հայրենիք եւ մասնակցել Նոր Այնթապի անուանակոչութեան արարողութեան: Յամալսարանի դասերը նոր էին սկսել: Սփիւռքահայութեան հետ մշակութային կոմիտէի նախագահ Վարդգէս Յամագասպեանը շտապ ինձ կանչեց եւ ասաց. «Սփիւռքի հայերն արդեն սկսել են ժամանել, բայց մենք դեռ չունենք Թագազիւղ Այնթապ վերանուանելու կառավարական հրամանը: Խնդրում են քեզ, մէկ եւ կէս էջի վրայ գրիր Նոր Այնթապ անունով աւան հաստատելու անհրաժեշտութիւնը հիմնադրող մի գրութիւն: Երկու օրից տեղեկանքը ինձ մօտ պէտք է լինի, որպէսզի այն փոխանցեմ Գերագոյն սովետի նախագահ Նազուշ Յարութիւնեանին»: Առաջին անգամը չէր, որ Յամագասպեանը նման վիճակ էր ստեղծում: Դա կառավարական շրջանների վրայ ճնշում բանեցնելու փորձուած հնարք էր:

Եթէ յիշողութիւնս ինձ չի դաւաճանում, տեղեկանքում ես կանգ առայ հետեւեալ կէտերի վրայ. 1) այնթապցիների հիմնական մասը գաղթել են Անիից ու Մուշից. 2) Այնթապի աչքի է ընկել ուրթական հաստատութիւններով եւ ուսումնատեղիներով: Յիմա կարող են աւելացնել, որ 1915-ի մարտի համարում National Geographic Magazine-ը ծաւալուն յօդուած է տպագրել Այնթապի քուլտուրի ու նրա պրոֆեսորներից Պեճեանի մասին. 3) Այնթապի արհեստարտներն աչքի են ընկել իրենց բացառիկ վարպետութեամբ: Այդ պատճառով Օսմանեան կառավարութիւնը կանգնեցրել է այնթապցի արհեստարտների աքսորը, որպէսզի չխաթարեն երկրի պաշտպանողականութիւնը. 4) այնթապցիներին բնորոշ է միասնութեան գիտակցութիւնը, ազգային յարաբերութիւններում նուրբ դիւանագիտական մօտեցումը: Սա դրսեւորուել է Այնթապի հերոսական ինքնապաշտպանութեան ընթացքում: 5) Այնթապն այն քաղաքներից է, որը մեծ յաղթանակով է աւարտել իր հերոսամարտը. 6) Եղեռնի ընթացքում այնթապցիները համեմատաբար աւելի քիչ զոհեր ունեցան: Այժմ համեմատաբար աւելի մեծ թուով այնթապցիներ կան սփիւռքում: Նրանց թում շատ են ականաւոր առեւտրականներ, գործարանատէրեր, գիտնականներ, մտաւորականներ, գիտնականներ ու քաղաքական գործիչներ:

(շարունակելի)

ԴՈՎՏ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ

Հունիսի 5-ը շրջակա միջավայրի միջազգային օրն է

ԹԵՂՈՒՏԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է...

ՀՀ կառավարությունը 2007 թ. նոյեմբերի 1-ին կայացրել է «Թեղուտի հանքավայրի ծրագրի իրականացման նպատակով հողերի նպատակային նշանակությունը փոխելու և հողամասեր տրամադրելու մասին» N1278-Ն և «Շնողի և Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի



նպատակային նշանակությունը փոխելու մասին» N1279-Ն որոշումները՝ հիմնվելով ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ACP ՓԲԸ Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի նախագծին տրված դրական փորձաքննական եզրակացության վրա:

ՀՀ նորանշանակ վարչապետի հետ վերջերս կայացած հանդիպման ընթացքում նրան են ներկայացվել Թեղուտի հանքավայրի շահագործմանն առնչվող մի շարք խնդիրներ.

1. Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի նախագիծը թերի է, հաշվարկը՝ սխալ: Նախագծում ծախսային հաշվարկները կատարված են 25 տարվա համար,

մինչդեռ բնությանն ու կենդանական աշխարհին հասցվող վնասները ներկայացված են միայն առաջիկա 8 տարվա համար: Հասցվող վնասի գնահատումը կատարվել է խիստ նվազեցված հաշվարկներով: Թերի է կատարված նաև ձկնաշխարհին հասցվող վնասի գնահատումը: Ըստ նախագծի՝ Շնող գետում և դրա վտակներում տարեկան արդյունագործական որսի համար առկա ձկնապաշարը կազմում է 130 կգ, որի ոչնչացման համար հատուցվող վնասը ներկայացված է ընդամենը 175.000 դրամ, մինչդեռ ըստ օրենքի՝ կենդանատեսակների ոչնչացման դեպքում վնասները հաշվարկվում են կենդանու յուրաքանչյուր միավորի համար: Թեղուտի հանքավայրի և հարակից տարածքների կենդանական աշխարհին հասցվող վնասը լիովին անտեսված է, իսկ ներկայացված թվերը ծիծաղելի են:

2. Ըստ նախագծի՝ հանքարդյունաբերական թափոնները լցվելու են Շնող գետի Կռունկ, Դուքանաձոր և Խառատաձոր վտակների հուները (կիրճերը): Հանքի շահագործման հետևանքով կխաթարվեն ջրագոյացման համակարգերը, կնվազի ջրի քանակը, ինչպես նաև կվատաբարանա դրա որակը:

3. ՀՀ բնապահպանության նախարարությունը Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի նախագծին տվել է դրական եզրակացություն՝ առանց շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործողությունների հնարավոր ազդեցության և հետևանքների շուրջ փորձագիտական լուրջ ուսումնասիրություն կատարելու:

4. Թեղուտի հանքավայրի շահագործման հիմնական օգուտների շարքում մատնանշվում են մոտ 1400 աշխատատեղերի ստեղծումը և տարեկան 6-7 միլիոն դոլարի

հասնող մուտքերը պետական բյուջե: Իրականում ստեղծվող աշխատատեղերը ժամանակավոր են (25 տարով), իսկ հանքավայրի շահագործման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասներն աստիճանաբար կվերացնեն գոյություն ունեցող գյուղատնտեսական կայուն աշխատատեղերը, որոնք բազմակի գերազանցում են խոստացված աշխատատեղերի թիվը:

5. Թեղուտի շահագործմանն առնչվող ՀՀ կառավարության որոշումների հետևանքով խախտվել են մի շարք միջազգային համաձայնագրեր և ՀՀ օրենքներ, այդ թվում՝ ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Անդրասիանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» համաձայնագիրը, ըստ որի՝ ազդեցության աղբյուր հանդիսացող Հայաստանը պետք է իրազեկեր հարևան՝ հնարավոր ազդեցության ենթակա երկրների (տյվյալ դեպքում՝ Կրաստանի և Ադրբեյջանի) հասարակայնությանը նախատեսվող գործողությունների և դրանց հնարավոր ազդեցության մասին:

6. ՀՀ օրենսդրությամբ չեն կարգավորվում հանքարդյունաբերության թափոններին առնչվող հարցերը, ինչի հետևանքով, փաստորեն, հանքարդյունաբերողին արտոնվում է չվճարել հանքարդյունաբերական թափոնները շրջակա միջավայրում գետեղելու և պահելու համար: Եթե դրանց դիմաց վճարվեր «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նույնիսկ ամենացածր սակագներով, տարեկան 7 միլիոն տոննա հանքաքար վերանշակելու դեպքում ACP ընկերությունը թափոնների համար ՀՀ պետական բյուջե



պետք է մուծեր ավելի քան 56 միլիոն դոլար: Փաստորեն, պետությունն ընկերությանն արտոնում է չմուծել այս գումարը՝ փոխարենն ակնկալելով 6-7 միլիոն դոլար հարկային եկամուտներ պետական բյուջե:

7. Հայաստանը հարուստ է ընդերքի հանածոներով, սակայն լիարժեք կերպով գնահատված ու հաշվառված չեն այդ պաշարները, չկա համապատասխան ռազմավարություն և երկարաժամկետ ծրագիր, որը նպատակաուղղված լիներ հանքանյութի բանական օգտագործմանը, բացահայտելի սոցիալ-տնտեսական զարգացումը խթանելու հնարավորությունները և հաշվի առնել ինչպես այսօրվա, այնպես էլ՝ ապագա սերունդների շահերը:

Մտահոգիչ է նաև այն հարցը, թե ինչով է հիմնավորված ևս մեկ պայմանագրի կնքումը ACP ընկերության հետ, երբ վերջինս արդեն մեկ անգամ տապալել է ՀՀ կառավարության հետ կնքած իր պայմանագիրը, որով պարտավորվել էր մինչև 2009 թ. իրականացնել գործողությունների շարք՝ որսալու և օգտահանելու իր կողմից գործարկվող՝ Ալավերդու պղնձամոլիբդենային մթնոլորտ արտանետվող թունավոր նյութերը: Որքանով է ընդունելի, որ Հայաստանում ընդերքօգտագործման ոլորտում շահագրգիռ անձ հանդիսացող ձեռներեցը ներգրավված լինի ՀՀ ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովի կազմում: ACP ընկերության նախագահ Վ. Մեջլումյանը ՀՀ նախագահի հրամանագրով ընդգրկված է այդ հանձնաժողովի կազմում:

200 ՀԱՋԱՐ ԴՐԱՍ ՆՊԱՍՏ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՈՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Համաձայն «Պետական նպատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24.2-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշել է.

1. Հաստատել Հայաստանի զոհված ազգային հերոսի ընտանիքի նպաստի վճարման կարգը:
2. Սահմանել Հայաստանի զոհված ազգային հերոսի ընտանիքի նպաստի չափը՝ 200.000 դրամ:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ 15-օրյա ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի զոհված ազգային հերոսների այրիներին և անչափահաս երե-

խաներին, ինչպես նաև նրանց խնամքի տակ գտնվող ընտանիքի մյուս անդամներին ամենամսյա ընդհանուր դրամական օժանդակություն տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 346 որոշմամբ Հայաստանի զոհված ազգային հերոսների այրիներին և անչափա-

հաս երեխաներին, ինչպես նաև նրանց խնամքի տակ գտնված ընտանիքի մյուս անդամներին ամենամսյա ընդհանուր դրամական օժանդակության վերաձևակերպումը՝ որպես Հայաստանի զոհված ազգային հերոսի ընտանիքի նպաստ:

Միաժամանակ ուժը կորցրած են ճանաչվել այս հարցերը կարգավորող ՀՀ կառավարության նախկին որոշումները:

ՀԱՐԱԿԻՑ ՄԱՍՈՒԼԻՑ

Այս խորագրի ներքո այսուհետ կներկայացնենք այլ պարբերականներից ծաղկաբաղ մտքեր, հարվածներ, որոնք կարող էին տրամադրվել նաև «Իրավական մշակույթ»-ում: Այսպիսի ծաղկաբաղի իմաստն առողջ ձայների էլ ավելի բարձրաձայնումն է: Այս անգամ առանձնացրել ենք «Ազգ» թերթի 2008 թվականի մայիսի 24-ի համարում *Յուրի Խուսապոյանի «Սպորտային փրոյեկտում»* վերնագրված հոդվածի որոշ հարվածներ:

Սպորտային փրոյեկտում

«...Այսօր հայկական հեռուստատեսության էկրաններից մեզ վրա խուժում են հայերեն բառերով համեմված արևելյան կաղկանձների ու արևմտյան երաժշտությունը կապկող-նմանակող ոռոցների տարափն ու հորձանքը, որ պարտադրվում-հրամցվում է իբրև արդի հայ երաժշտություն: Մանավանդ ահավոր է մահմեդական արևելքի ճնշող ու ստորացնող ներկայությունը՝ հայերեն բառերով թուրքական, պարսկական և արաբական երգի

ելևէումներով սրտաճնկի կաղկանձներն ու վայրցները, որ ամեն օր «Մկների ժողով»-ի փառապանծ անուններով և բանտերից ու աշխատանքային ուղղիչ գաղութների միջավայրից առած մականուններով հայ «երգիչներն» ու «արվեստագետները» լցնում են հայ մարդու վրա՝ կրկին ու կրկին սպանելով Կոմիտասին, հայ երգն ու երաժշտությունը: Ինչ-որ մեկը, ոմն, շեշտը դնելով քառավանկ բառի առաջին վանկի վրա, հեռուստատեսության էկրանից վայում է՝ «ա-նապա-

տի...», «ա-նապատի...»: Ու դա և այդօրինակ վայնասունը հայկական հեռուստատեսությունը հրամցնում է իբրև հայ երգ ու հայ երգեցողություն: Ակամա ու գուժ ես հարցնել՝ իսկ ու՞ր է հայ երաժշտագիտական «միտքը», ինչու է գբաղված, ինչու է լռել ու ձայն չի հանում քաղքենի «ռըսախտության» ճահիճում միրհող հայ կոմսերվատորիան, որ Կոմիտասի անունն է կրում...»:

«...Հայկական հեռուստատեսության գռեհիկ հաղորդումների ավելի քան գռեհիկ լեզվի ու ժարգոնի մեջ ամեն օր

սպանվում-ոչնչացվում են հայոց լեզուն՝ հայ ժողովրդի ինքնության մեծագույն երևույթը, հայ գրականությունն ու հայ մշակույթը, և մենք դեռ խոսում ենք Հայաստանի ու հայության հանդեպ թուրքերի ոճրագործությունների ու եղեռնի մասին»:

«...Հայկական հեռուստատեսությունը, բացառությամբ թերևս «Շողակաթ» և «Հայրենիք» հեռուստաալիքների, պարզապես ավերում է դպրոցական դաստիարակությունն ու կրթությունը, իր էությամբ ու բովանդակությամբ փաստորեն դեմ է հայ գրական լեզվին, հայ մշակույթին, առհասարակ բարձր ճաշակին ու ըմբռնումներին»:

«Ազգ», 2008 թ. մայիսի 24



ՄՇԱԿՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, ռեժիսոր, սցենարիստ, մանկավարժ, բնական գիտությունների Եվրոպական ակադեմիայի իսկական անդամ Էլմիրա Հեքեյանի ծննդյան 80-ամյակի առթիվ

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՎԻՐՅԱԼ ԷԼՄԻՐԱ ՀԵՔԵՅԱՆԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

Ամսապառ էներգիայի փեր այս անհատականության անցած ուղին լի է հայրենասիրության, արվեստի նկատմամբ անհագ սիրո, նվիրվածության ուսանելի էջերով: 67 փարի ամենապարզ նվիրումով ծառայելով հայ մշակույթին՝ Էլմիրա Հեքեյանը լուրջ ներդրում է ունեցել ազգային արվեստում:

Հայրենիքը բարձր է գնահատել նրա անցնուրայ աշխատանքը՝ նրան պարգևատրելով ԽՍՀՄ մեդալներով, 12 պատվոգրերով, ՀՀ մշակույթի նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալներով: Միջազգային 3 մրցանակների դափնեկիր է, 2004 թ. պարգևատրվել է ՀՀ երաժշտական մրցանակաբաշխության հարույկ մրցանակով: 2006 թվականից բնական գիտությունների Եվրոպական ակադեմիայի իսկական անդամ է:

Ծնվել է Գանձակ քաղաքում, մտավորականի ընտանիքում: 1946-1948 թթ. սովորում է Բաքվի Լ. Երամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի ստուդիայում՝ միաժամանակ աշխատելով որպես դերասանուհի: 1948 թ. արդեն Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի ուսանող էր: Նույն տարին ընդունվում է Հայաստանի թատերական գործիչների միության: Թատերական ինստիտուտի միակն՝ Գրիբոյեդովի անվանական կրթաթոշակը հինգ տարի անընդմեջ շնորհվում է նրան: 1953 թ. Գորիսի թատրոնում բեմադրում է իր դիպլոմային աշխատանքը՝ Յ. Գալանի «Սերը լուսաբացին» պիեսը՝ ստանալով ռեժիսորական մկրտություն: Այս պիեսը մինչև ժամանակ բեմադրվում է Սուրբուկյանի թատրոնում և մշակույթի նախարարության կողմից արժանանում խրախուսանքի: 1957 թ. Ստանիսլավսկու թատրոնում բեմականացնում է Ֆ. Դոտտևալու «Նվաստացածներն ու անարգվածները» վիպակը, այս բեմականացումը նա համարում է թատերական բեմադրման ասպարեզում իր նվաճած բարձրակետը: 1958 թ. հրավիրվում է նորաստեղծ հայկական հեռուստատեսություն՝ որպես գրական-գեղարվեստական խմբագրության ռեժիսոր: Նոր ասպարեզ, նոր մտահղացումներ... Ստեղծում է «Հայ թատրոնի պատմություն» հաղորդաշարը դերասաններ Սիրանուշի, Պ. Աղամյանի, Հասմիկի, Վ. Վաղարշյանի, Ա. Ավետիսյանի, Վ. Փափազյանի, Զ. Ներսիսյանի, Զովի. Աբելյանի և այլոց մասին, համարձակորեն նոր խոսք ասում հայ ժողովրդի պատմության, գրականության, թատրոնի մասին:

Կանի դրամատիկական թատրոնի զարգացման ուղիները՝ հաղորդումը՝ նվիրված Վ. Աճեմյանի, Լ. Չոխրաբյանի, Ա. Արմենյանի, Ե. Դուրյանի, Յ. Ամերիկյանի, Ա. Ռշտունու դերակատարումներին:

Նրա հեղինակած հաղորդումներում ակներև է ռեժիսորի անհանգիստ, ըմբոստ, անարդարության հանդեպ անհանդուրժող վերաբերմունքը: Է. Հեքեյանի յուրաքանչյուր հաղորդում իրադարձություն էր: Նրա նորամուծություններից էր հեռուստաթատրոնի ստեղծումը: Նրա հեղինակած կինոնկարները, վավերագրական ֆիլմերը տեղ են գտել Ազգային հեռուստադարանի ոսկե ֆոնդում: 1964 թ. նկարահանած «Միջև 16 տարեկաններին թույլատրվում է...» երաժշտական ֆիլմն արժանանում է ԽՍՀՄ կինեմատոգրաֆիստների միության մրցանակին ու առաջին կարգի դիպլոմի (Մոսկվա, 1964 թ.) և միջազգային «Ա» կարգի դիպլոմի Պրահայի միջազգային փառատոնում (1965 թ.): 1969 թ. Հեքեյանին շնորհվեց համամիութենական բարձրագույն կարգի ռեժիսորի որակավորում: 1971 թ. ստեղծել է յուրօրինակ թատրոն, ուր ներկայացնում էր (Լ. Սամվելյանի հետ) համաշխարհային բեմադրվեստի եզակի նմուշներ: 1975-93 թթ. ստեղծել է նոր հաղորդաշարեր՝ «Հասմիկ հանդես», «Մարդիկ, կենցաղ, բարքեր», «Խոտի բույր», «Ձեր այգին», «Գեղեցիկի աշխարհում», «Սեր տան պատիվը» և այլն:

1945 թվականից զբաղվել է մանկավարժությամբ՝ դասավանդելով հանրակրթական դպրոցներում, այնուհետև թատրոնի պատմություն, բեմադրվեստ և լեզվի կուլտուրա, դերասանի վարպետություն, բեմական խոսք է դասավանդել Գեղարվեստաթատերական ինստիտուտում, Պարարվեստի, Ռ. Մելիքյանի, Ա. Բաբաջանյանի անվան ուսումնարաններում:

Է. Հեքեյանը հեղինակ է նաև երկու տիկնիկային պիեսների՝ «Չարածի այծի խորհուրդը» և «Ղնարամիտ նապաստակը»: Արվեստագետը մեծապես նպաստում էր երեխաների գեղագիտական դաստիարակությանը: Մանուկների ճաշակը, միտքը զարգացնող հաղորդումներում խստապահանջ ռեժիսորը ներգրավում էր լավագույն արտիստների օրինակ՝ «Եկեք երգենք» հաղորդաշարը երեխաներին մատուցում էր Փայլունիկը՝ Լուսինե Չաբարյանը: 1973 թ. նրա



զանգերով ստեղծվեց գիտաուսումնական հաղորդումների խմբագրություն՝ հիմնելով «Հայ գյուտարարներ» հաղորդաշարը, ճարտարապետական արվեստը մեկնող «Գառնի» հանդեսը: Ստեղծագործական գործունեության վերջին 18 տարիներն աչքի են ընկնում երաժշտական ուղղվածությամբ: 1984 թվականից՝ հատկապես ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի կամերային երգչախմբի ռեժիսոր և տնօրեն աշխատելու տարիներին, նպաստել է ազգային ռադիոյի և հեռուստատեսության ծայնադարանները բարձրորակ ստեղծագործություններով համալրելուն: «Հայաստանի փոքրիկ երգիչներ» ֆիլիալնունիայի տնօրեն ու ռեժիսոր է. Հեքեյանը մեծապես նպաստել է խմբի գեղարվեստական աճին: 1995 թ. ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՈ-ի 50-ամյակին նվիրված համաշխարհային Գոլդեն Գեյթ մրցույթ-փառատոնում Էլմիրա Հեքեյանին շնորհվեց ոսկե մեդալ: «Հայաստանի փոքրիկ երգիչների» ելույթների հիման վրա է. Հեքեյանը ստեղծել է 21 անուշադանակի համերգ-ֆիլմեր, ինչպես՝ «Կոմիտասն աշխարհի բեմերում», «Հաղթարշավից հետո», «Համաշխարհային փառատոներ» և այլն: Այսօր էլ Էլմիրա Հեքեյանը լեցուն է ստեղծագործական մտահղացումներով և դրանք իրականացնելու անսպառ եռանդով: Պատահական չէ մտերիմների և գործընկերների բնորոշումը՝ «Կենդանի լեզուն»: Մանկավարժ ռեժիսորը շուրջ 60 տարի կրթում և դաստիարակում է դրամատիկական և օպերային թատրոնների երգիչների ու դերասանների, պարարվեստի, թատերարվեստի մանկավարժների: Նրա շուրջ 100 սաներն իրենց լավագույնս են դրսևորում Հայաստանի և արտերկրների առաջատար թատրոններում:

ՄԱՐԻՆԵ ՄԻՒԹԱՐՅԱՆ
դերասանուհի, ԵԹԿՊԻ-ի դասախոս

Մեն է պի ա

ՌՈՒՐԵՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Արձակագիր, դրամատուրգ, ռեժիսոր Ռուբեն Արամի Մարուկյանը ծնվել է 1934 թ. Երևանում: Ավարտել է Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտը: Աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում, Երևանի դրամատիկական թատրոնում, «Երևան» կինոնվավորումում, Երևանի Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնում՝ որպես բեմադրիչ, գեղարվեստական ղեկավար և տնօրեն: Ռ. Մարուկյանը չորս տասնյակից ավելի բեմադրությունների հեղինակ է: Լույս է ընծայել՝ «Ինչպես են ծաղիկ ծառերը», «Բացվող վարադույրներ», «Ձիկարելի արկածները», «Հեքիաթների տունավաճառ» և այլ գրքեր: Նրա ստեղծագործությունները թարգմանվել և լույս են տեսել ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և այլ լեզուներով: Այժմ Երևանի Կինոյի և թատրոնի պետական ինստիտուտում նախարարատեսական դասընթացների բաժնի վարիչն է, պրոֆեսոր:



ՆԱԽԵՐ Գ

Եկեղեցու մեծ վեհաշուր, խորին խորհրդով լի՝ Բանաստեղծություն եմ կատուցում: Բառն այնպես եմ շարում տողի մեջ, Ինչպես սրբատաշ քարը խորանի շարվածքում: Ծախարանի թևեր եմ բանդակում հնչյուններից, Որ քաղցրալուր մեղեդիներով լցնեն մարդկանց ունկերը, Վեր բարձրացնեն նրանց, հաղորդվեն Բարձրյալի հետ... Միակիս՝ Մայր լեզվիս բառերով կերտված տողերին Չանգակատան դողմանի հնչեղությամբ եմ օժում, Որ նրա հետ առնչվող փառավորվի Մեսրոպյան հայտնության հրաշքով... Բանաստեղծության յուրաքանչյուր տան մեջ Կարտի, երազանքի, սիրտ կանթեղներ եմ կախում՝ Կյանքս յուղի տեղ այրում նրանց մեջ:

ԽՈՒՆԻՒՈՒՆ ՄՏԵՐ

Հեռավոր մավարկությունից վերադարձած մավր

Ուզում եմ վերապրել այն հրճվանքը, Որ վայելել եմ՝ ծովերի գայլույթը գազելով, Որպեսզի կորցրածներս, պարտություններս, հաղթանակներս Դեմ մծարներին ու իմանամ, թե ինչ եմ շահել... Հուսարված չեմ եղել, չեմ. Նույնիսկ այն պահերին, երբ փոթորիկներն ահեղամուռնչ, Տաշելի պես, ժայռերին են գարկել մավակա: Միշտ ապավինել եմ Աստուծո գործությանը, Ու նա փրկել է ինձ կործանումից: Ոչ մի օր հավատիս կանթեղը չեմ մարել, Չեմ դավաճանել ո՛չ ինձ, ո՛չ ուրիշներին, Հացկատակ չեմ եղել: Հայացքս Հովհաննես Թումանյանին՝ Կանգնել եմ նրա տաճարում, Վայելել հանճարի լույսը՝ որպես օրինակ ու պարզ... Փոթորիկների դեմ մաքառած մավակա, Նավահանգիստ մի՛ փնտրիր, Փոթորիկ, փոթորիկ է նորից, Նետվի՛ր ալիքների մեջ: Հոգնած ճայեր կան. ուզում եմ թառել կայմիդ, Լուրս, լուրս, մավակա, փարտաղ անմար է, Հավատո՞ղ՝ գորավոր, Նավահանգիստը հեռու չէ, շուտով կհասնես:

ԿՈՄԻՏԱՄԵՆ

- Գարուն ա, ձուն ա արել...
Չէ, չէ, ձյուն չէ,
Միքանի ծառեր են ծաղկել.
Ու ես կարտից խենթացած,
Գրկում եմ ծառեր ծիրանի,
Գնում եմ, կանչում,-
- Հե՛յ, հե՛յ, ծաղկել են ծիրանի ծառերը...
Վազում եմ, վազում ծառից ծառ.
- Գարուն ա, գարուն ա, գարուն...
Հե՛յ, հե՛յ, գարնացե՛ք, ցնճացե՛ք,
Չար աչքեր, չար չարքեր, բռնացե՛ք,
Նախրյան այս երկրում լուսաշող
Հավերժ են գայունները,
Ու հավերժ են ծաղկած մնալու
Կոմիտասի ծիրանի ծառերը...

Հոգևոր

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ. «ԱՄԱՐԱՆ ՀԱՏՈՐ»

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավետարանը հայտնապես չի ցուցանում, թե Քրիստոս, հայտնվելով դժոխքում, ինչքան գործեց այնտեղ: Այս մասին ինչ-որ բան վարդապետներն են ասում կամ մեռյալները, «որոնք այսօր Քրիստոսի հետ հարություն առան, մտան երուսաղեմ և շատերին երևացին»: Քրիստոսի մահվանից առաջ Սաղայելը դժոխքին ասում է. «Պատրաստվիր, դժոխք, որովհետև կամենում եմ շուտով քեզ մոտ բերել Հիսուսին և նրանից վրձ առնել, որովհետև լուսավորում է նրանց, ում կուրացրել եմ, վերստին քայլել է տալիս նրանց, ում կաղ եմ դարձրել»: Դժոխքն ասում է. «Ո՛վ է Հիսուսը, նա՞ է, որ հարություն տվեց Ղազարոսին»: Սաղայելը հաստատում է: Այդ ժամանակ դժոխքն ասում է. «Ո՛վ Սաղայել, նրան այստեղ մի՛ բեր, այլ պես կղզջաս: Ես Քրիստոսի գործյալն փորձն առա, որովհետև Ղազարոսն իմ բանտում էր և Քրիստոսի ծայրը լսելով՝ արժվի պես դուրս սլացավ»: Սաղայելն ասում է. «Մի՛ երկնչիր, դժոխք, գիտեմ նրան, որովհետև մարդ է և մահից երկնչում է, քանզի ասաց՝ հոգիս տխուր է մահու չափ» (Մտք Ի2:38): Դժոխքն ասում է. «Մի՛ խաբվիր, ո՛վ Սաղայել, որովհետև տկարության ներքո մեծ գործություն ունի քաջքրած և կամենում է քեզ հաղթել»: Սաղայելն ասում է. «Ա՜նհո՛ գ մնա, ամեն ինչ պատրաստել եմ մահվան գործի համար՝ խաչը, գեղարդը, իսկ հրեաների արտերը հոժարեցրել եմ նրան սպանելու մտքին»: Երբ Սաղայելը բռնել է տալիս Քրիստոսին, վերջում իմանում է, որ իրեն վնաս է հասցնելու Քրիստոսի մահը, ուստի երբ Քրիստոսին տանում են Պիղատոսի մոտ դատապարտելու, տեսիլք է ցույց

տալիս Պիղատոսի կնոջը, նրան ուղարկում է Պիղատոսի մոտ՝ ասելով. «Չարիք չգործես այդ մարդու հանդեպ, որովհետև սուրբ է»: Սակայն չի կատարվում Սաղայելի կամքը, որովհետև Քրիստոս հույժ մեռնելու կարող էր, որ կատարվեն մարգարեների գրվածքները, և աշխարհը փրկվի: Երբ Քրիստոս մոտենում է խաչին, սատանան նրան սպասելիս է լինում խաչի մոտ. թերևս մի բան գտնի նրա մոտ: Ոչ մի մեղք չգտնելով՝ սարսափում է: Որպեսզի Քրիստոսի մահով չավերվի իր որջը, Սաղայելն անմիջապես գնում է դժոխք՝ այն ամրացնելու ընդդեմ Քրիստոսի: Քրիստոս կարապետ է ուղարկում դժոխք, ուր հանկարծակի լույս է ծագում: Այդժամ նախահայր Ադամն ավետիս է մատուցում. «Ուրախ եղեք, իմ որդիներ, որովհետև այս լույսն Աստծո Որդու լույսն է, որ կամենում է զալ և մեզ փրկել»: Այդ ժամանակ Եսայի մարգարեն ասում է. «Ես այս լույսի մասին մարգարեացա՞ ասելով. «ժողովուրդը, որ նստում էր խավարի մեջ, մեծ լույս տեսավ»: Իսկ Սիմոն ծերունին ասում է. «Ճշմարիտ են այս խոսքերը, որովհետև գրվել է մահու Հիսուսին»: Հովհաննես Սկրիտչն ասում է. «Արդարև, այդպես է, որովհետև երեսնամյա հասակում մկրտել եմ նրան»: Այդժամ հոգիները ցնծում են դժոխքում. այս տեսնելով՝ դևերն ահաբեկվում են: Երբ Քրիստոս խաչի վրա ավանդում է հոգին, հասնելով դժոխքի դռների մոտ՝ բարձրաձայն գոչում է մարգարեական խոսքը. «Վեր քաշեք, իշխաններ, դռները ձեր, և փառքի արքան թող ներս մտնի»: Չարմացած դևերը ներսից տարակուսում են. «Ո՛վ է այս փառքի արքան»: Դավիթ մարգարեն պատասխանում է. «Կարողությամբ հզոր Տերն է նա, պատերազմում գործող Տերը»: Հիսուս երկրորդ անգամ է նույնը ծայրում, և Դավիթը սարսափահար դևերին ասում է. «Չորությունների Տերը. նա ինքն է փառքի արքան» (Սղմ ԻԳ:7-10): Ապա Քրիստոս խորտակում է դժոխքի դռները, մտնում ներս ու քաղցրածայն ողջունում նախահայր Ադամին ու նրա զավակներին: Քրիստոսին տեսնելով՝ բոլորը լալազին նրա ոտքերն են ընկնում. «Գոհանում ենք քեզանից, մեր փրկիչ, քանզի վաղուց քեզ էինք սպասում: Քո փառքը արդարապես հայտնեցիր աշխարհին, դժոխքում ևս ցույց տուր և մեզ փրկիր»: Քրիստոս հրեղեն շղթաներով կապում է դևերի պետին՝ Սաղայելին, և ազատ արձակում շղթաված հոգիներին: Այս երեք օրերի ընթացքում մարմինը գերեզմանում էր, Հոգին՝ դժոխքում. ազատություն էր քարոզում, ինչպես Պետրոս առաքյալն է ասում. «Քարոզեց բանտում եղած այն հոգիներին, որոնք մի ժամանակ ապստամբել էին» (Ա Պետրոս Գ:19):

Գիշերվա ընթացքում Քրիստոսի հոգին գերեզմանում նույնանում է մարմնի հետ, մեռյալներից հարություն առնում՝ ազատություն պարգևելով կապված հոգիներին: Նրանք, ովքեր չհավատացին, տանջանքներից ժամանակավորապես ազատվեցին և վախճանի ժամանակ դարձյալ կղառնան դժոխք: Գրաբարից փոխադրեց **ԽՈՐԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՆՆՈՒԿՅԱՆԸ**

ՀԱՅԵՐԵՆ ՏԱՌԵՐԻ ԱՐԱՐՄԱՆ ՀՐԱՇԻՐ

Ի՞նչը պատճառ դարձավ գրեթե գյուտի, ներշնչանքի համար: Ի՞նչ հզոր աղբյուր էր թաքուն ոռոգում Սուրբ Մեսրոպ Մաշտոցի հոգու այգեստանը... Իր իսկ վկայությամբ՝ սերն առ Աստված և մերձավորները, քանի որ ասում է. «Տրտում եմ ես, և անպակաս է արտիս ցավը եղբայրներիս և ազգակիցներիս տգիտության համար»: Հիրավի ցավում էր նա այն տխուր իրողության համար, որ հայոց տաճարներում Ավետարանն ընթերցվում էր ասորերենով կամ եբրայերենով, իսկ հայ մարդը չի կարողանում այն կարդալ և խորամուխ լինել արարչագործության գաղտնիքներում՝ լոկ փշրանքներ ճաշակելով այն ճոխ սեղանից, որին մոտենալու հրավերը բոլորիս է տրված: Ահա այս մտադրությամբ էլ երանելի Մաշտոց վարդապետը դիմեց Սահակ Պարթև կաթողիկոսին, վերջինս էլ՝ հայոց Վանաձաղու արքային: Խանդավառված սրբերի՝ հայերեն գրեր արարելու բարի փափագով՝ արքան հավանություն տվեց և խրախուսեց Սուրբ Մաշտոցին այդ գործում: Երկար դեգերումներից, ճանփորդությունից հետո տուն էր դառնում Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետը, քանի որ ոչ մի ժողովրդի մոտ չտեսավ մեր լեզվին համահունչ գրեր, իսկ արդեն իսկ գործածվող դանիելյան մշակագրերը (որոնք Դանիել վարդապետի մոտ էին եղել) բավարար չէին հայերենի բոլոր բարբառների գրավոր արտահայտման համար: Վերադարձին, երբ Սամոսատ քաղաքում էր, տրտում իր ձեռնու-

նայն վիճակից, սովորականի պես աղոթում էր, երբ հանկարծ մի լուսեղեն աջ ձեռք հայտնվեց երկնքից և, ինչպես ձյան վրա կգրեին, աստվածատուր գործյալ մեկ առ մեկ արարեց հայոց գրերը՝ Ա-ից մինչև Ք: Այն ամբողջությամբ աղոթք էր՝ կազմված յուրաքանչ-յուր տառով սկսվող բառերով. Արարիչ Բովանդակ Գոյութեանց, Դատավոր Երկնից, Չորավոր Էութուն Ըստիուն: Թագավոր ժամանակաց, Իրաց, Լուսոյ, Խաւարի, Ծովուց Կենսականաց Համայնից, Չայն Դողանքանաց, Ծեմարան Ստաց, Յիսուս Նազովրեցի, Ընծորի Ոգեշունց, Չարեաց Պատաղիչ, Չանաղիր Ռաբբի, Սրբոց Ավայարան, Տեր Բայեթի Յանկալի Ու Փառք Քրիստոսիդ: Ամէն Այսպես, առնելով Տիրոջ մեծ պարգևը, սուրբը վերադարձավ հայրենիք, ուր և արժանացավ արքունիքի և ողջ ժողովրդի խանդավառ ընդունելությանը: Ապա շտապով հանձն առավ դպրոցներ հիմնելու և հայ մանուկներին մայրենին գրավոր ուսուցանելու պատասխանատու գործը: Բայց նախ Աստվածաշունչ մատյանը թարգմանեց ասորերենից, որ փոսթամակի թարգմանություն էր, քանի որ ասորական բնագիրն իր գեղարվեստական ոճով եպարծիքում էր հունարեն բնագիրին:

Ուստի ասորական բնօրինակի հայերեն թարգմանության վրա մեկ տարի աշխատելուց և ավարտից 13 տարի անց՝ 432-433 թթ., հունարեն բնօրինակի թարգմանությունը կատարեց իր աշակերտների հետ միասին, որոնց շուրջ 13 տարի ուղարկել էր Հունաստան՝ հունարենի մեջ հմտանալու համար: Աստվածաշունչի հունարեն բնագրի հայերեն թարգմանությունը կոչվեց «թագուկի թարգմանություն», քանի որ համարվում է լավագույնը: Ամեն բան օրինաչափ, ներդաշնակ է աստվածատուր հայերեն գրերում, քանի որ յուրաքանչյուր տառ իր միացման գծիկներում խաչեր ունի և, բացի այդ, հայոց գրերն աշխարհայաց և վերևից ներքև գրություն ունեն, որով դարձյալ խաչ ենք արարում: Տերն իր ամենագորկնիքն է դրել նույնիսկ մեր գրավոր խոսքում. որչափ ավելի հոգ է տանում մեր մասին, որ կրում ենք մեր մեջ հավիտենական հոգի: Ահա այս մտադրությամբ էին Սուրբ Սահակը և Սուրբ Մաշտոցը ջանում մեզ մատուցել կենսարար խոսքը հաստատող հրաշակերտ գրերը: Առ այսօր ամեն տարի հայոց գրերը թարգմանեցաք տոնին հավուր պատշաճի հիշատակվում են Հայոց եկեղեցու կողմից՝ ներառելով նաև բոլոր այն սրբերին, որոնք թարգմանության երանելի գործը կատարեցին՝ ի փառս Աստծո և ի փրկություն մեզ: **ՆԱԻՐԱ ՊԵՊԱՆՅԱՆ**

ՀՈԳԵՎՈՐ ՏՈՒՍՑՈՒՅՑ

Հունիսի 21 - Տոն 12
առաքյալների և Սբ Պողոսի

Հունիսի 22 - Բարեկենդան
Վարդավառի

Հունիսի 29 - Վարդավառ

ԳԻՐՔ ԱՌԱԿԱՅ

ԽՐԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ

7 Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկուզն է, որ բարի Հանճար է բոլոր նրանց Համար, ովքեր առաջնորդում են նրանով, իսկ զգոնութեան սկիզբը բարի աստուածապաշտութիւնն է, բայց ամբարիշտներն արհամարհում են իմաստութիւնն ու խրատը:

8 Լսի՛ր, որդեա՛կ, Հօրդ խրատը եւ մի՛ մերժիր մօրդ պատուիրանը, որպէսզի չնորհի պաակ կրես քո գլխին եւ ոսկի մանեակ՝ քո պարանոցին:

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԿԱՆՁԸ

20 Իմաստութիւնը գովաբանուում է ճանապարհների վրայ, բարձր ձայնով Հուշակուում Հրապարակներում, 21 քարոզուում պարիսպների գլխից, ազգաբարուում Հզօրների դռների առջև եւ Համարձակ խօսուում քաղաքների դարպասների մօտ: Այնքան ժամանակ, քանի դեռ անմեղները Հետամուտ կը լինեն արդարութեան, չեն ամաչելու: 22 Բայց ամբարիշտները, որ թշնամութիւն են ցանկանում եւ ամբարշտանալով ատոււմ են իմաստութիւնը, պիտի դատապարտուեն յանդիմանութեան:

Աստվածաշնչական ճաշու ընթերցվածներ

Հունիսի 16-30

16 – Բ2. Առ 1.1-9, Ես 41.1-3, Եբ 12.1-7, Սր 13.9-13

17 – Գ2. Չք 3.7-4.9, Ա Կր 12.28-13.3, Ստ 23.34-39

18 – Դ2. Պահք: Հո 10.5-17, Ստ 13.31-39

19 – Ե2. Դ Թգ 13.14-21, Ա Կր 2.6-10, Ղկ 4.25-30

20 – Ուր. Պահք: Հո 11.1-12, Ստ 13.43-52

21 – Շք. Իմն 9.9-10.2, Ելք 15.23-27, Ա Թս 2.9-16, Ստ 9.36-10.7

22 – Կիր. Ձ. կիր. զկնի Հոգեգալստեան: Ես 3.1-11, Հո 11.13-24, Ստ 14.13-21

23 – Բ2. Ա. օր Վարդավառի Պահոց: Հո 11.25-36, Ստ 14.22-36

24 – Գ2. Բ. օր Վարդավառի Պահոց: Հո 15.1-13, Ստ 15.1-20

25 – Դ2. Գ. օր Վարդավառի Պահոց: Հո 15.14-29, Ստ 15.21-28

26 – Ե2. Դ. օր Վարդավառի Պահոց: Հո 15.30-16.16, Ստ 15.29-38

27 – Ուր. Ե. օր Վարդավառի Պահոց: Հո 16.17-27, Ստ 15.39-16.12

28 – Շք. Յիշատակ Տապանակին հնոյ և տօն նորոյ Սրբոյ Եկեղեցոյ: Ելք 25.10-14, Հս 3.14-4.14, Ա Թգ 6.18-7.2, Բ Թգ 6.12-19, Եբ 9.1-10, Ստ 5.17-20

29 – Կիր. Վարդավառ: Իմն 7.25-8.4, Չք 14.16-21, Ա Հի 1.1-7, Ստ 16.13-17.13

30 – Բ2. Ելք 19.9-13, Դ Թգ 2.9-12, Ա Հի 5.9-12, Հի 1.1-17

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Յ Թ - Ա Ջ Դ - Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ԻՄ ԲԱԺԻՆ ԶԱՐԸ ՄԻՅԴ ՇԵՆՔԻՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ՆՈՐ ՊԱՏԱԿՈՒՄՆԵՐՆ ԵՆ՝

(սկիզբը՝ նախորդ համարում)

- ՄԻՅԴ շենքի կառուցման համար նվիրաբերություններ են կազարել հեղուկալ կազմակերպությունները
1. «Խաչկոզ ուլիներ» ՉԿ (20 քար՝ 5.000 դրամ)
2. «ՀԿ կենտրոնի հյուսիսային մասնաճյուղ» (40 քար՝ 10.000 դրամ)
3. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դպարան (200 քար՝ 50.000 դրամ)
4. Վանաձորի թիվ 7 համալիր մանկապարտեզի մարզադահլոց (8 քար՝ 2.000 դրամ)
5. Վանաձորի թիվ 6 միջնակարգ դպրոց (160 քար՝ 40.000 դրամ)
6. Սր. Ջորայանի քուն-թանգարան (2 քար՝ 500 դրամ)
7. ՀԳՄ Լոռու մարզային թատնուկ (2 քար՝ 500 դրամ)
8. Վանաձորի թիվ 30 նախադպրոցական ուսումնական հասարակություն (14 քար՝ 3.500 դրամ)
9. «Վարժապետ» ԲԲԸ (20 քար՝ 5.000 դրամ)
10. Լուսի ԳԳՄ (200 քար՝ 50.000 դրամ)
11. «Ավրոգեն-Ս» ՍՊԸ (400 քար՝ 100.000 դրամ)
12. Վանաձորի թիվ 4 համաքոճարան (40 քար՝ 10.000 դրամ)
13. «Բոնո» կամերային թատրոն ՓԲԸ (60 քար՝ 15.000 դրամ)
14. «Ջարսեր» ՍՊԸ (80 քար՝ 20.000 դրամ)
15. Վանաձորի թիվ 5 համաքոճարանի աշխարհակազմ (68 քար՝ 17.000 դրամ)
16. Վանաձորի թիվ 31 մանկապարտեզ (20 քար՝ 5.000 դրամ)
17. «Դուստր Մելանյա» ՍՊԸ (200 քար՝ 5.000 դրամ)
18. «Լ. Աղաբաբյան» ՍՊԸ (400 քար՝ 100.000 դրամ)
19. «Բյուրակ» կրթահամալիրի Անանի մասնաճյուղ (40 քար՝ 10.000 դրամ)

Մայիսի 17-ի հեռավարմարտերի ընթացքում նվիրաբերություններ են կազարել հեղուկալ անհատները՝

- 1. Արտյան Անուշ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
2. Արտյան Արմաթյա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
3. Արտյան Թերեզա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
4. Արտյան Վարդան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (12 քար՝ 3.000 դրամ)
5. Ալվազյան Գրառ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
6. Ալվազյան Ռոման, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
7. Ալվազյան Սուսաննա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
8. Ալվազյան Սարգիս, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դրամ)
9. Ալվազյան Սվետլանա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
10. Անանյան Բելլա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
11. Անտոնյան Ռուզաննա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
12. Աջան Գարիկ, ք. Երևան (2 քար՝ 500 դրամ)
13. Աջաճյան Արթուր, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
14. Աջաճյան Գառնիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
15. Աջաճյան Տիգրան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
16. Առաքելյան Արա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
17. Ավագյան Աննա, ք. Երևան (1 քար՝ 250 դրամ)
18. Ավետիսյան Ելենա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
19. Արաքսյան Վաչագան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
20. Արսենյան Աննա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
21. Արսենյան Աշոտ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
22. Բաբայան Արմինե, ք. Երևան (1 քար՝ 250 դրամ)
23. Բաբայան Սֆյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր, ՎՊՄԻ դասախոս (40 քար՝ 10.000 դրամ)
24. Բաբայան Օհրեդին, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
25. Բաղդասյան Արշակ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
26. Բախչյան Անահիտ, ք. Երևան (8 քար՝ 2.000 դրամ)
27. Բեռնեջյան Արման, Լոռու մարզ, ք. Վանաձոր (12 քար՝ 10 ԱՄՆ դոլար)
28. Գարրիկյան Արն, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
29. Գալստյան Օտն, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
30. Գասպարյան Անդրանիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դրամ)
31. Գասպարյան Ջաիրա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
32. Գասպարյան Իրինա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
33. Գինույան Արարատ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դր.)
34. Գինույան Արման, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
35. Գինույան Արմինե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
36. Գինույան Մարգարիտ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
37. Գինույան Մարին, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
38. Գոգինյան Արման, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
39. Գոգինյան Մաշկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դրամ)
40. Գոցյան Արամ, Մանուկյան Շողիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
41. Գրիգորյան Անժելա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
42. Գրիգորյան Արման, Լոռու մարզ, ք. Վանաձոր, ՎՊՄԻ (1 քար՝ 250 դրամ)
43. Գրիգորյան Մարգո, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
44. Գրիգորյան Նաիրա, ք. Երևան (1 քար՝ 250 դրամ)
45. Գրիգորյանների ընտանիք, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
46. Գևորգյան Վաչեկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 300 դրամ)
47. Գալլազյան Մելա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (10 քար՝ 2.500 դրամ)
48. Գալլազյան Նարե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (10 քար՝ 2.500 դր.)
49. Գալլազյան Մանվիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դր.)
50. Գալլազյան Տիգրան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (10 քար՝ 2.500 դրամ)
51. Գանիկյան Արթուր, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
52. Դեռ ջնված թռուների հովանախնայան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
53. Եզանյան Գայանե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
54. Եզանյան Գարիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 200 դրամ)
55. Եզարյան Արևու, Լոռու մարզ, ք. Վանաձոր (12 քար՝ 3.000 դրամ)
56. Երզնյան Աննա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
57. Էլոյան Սուսաննա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
58. Զարուհյան Գառնիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
59. Զարուհյան Սամվել, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
60. Զորոյան Գառնիկ, ք. Երևան (2 քար՝ 500 դրամ)
61. Զորոյան Հովհաննես, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
62. Զորոյան Պարզև, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
63. Զումանյան Եզր, Լոռու մարզ, ք. Վանաձոր (40 քար՝ 10.000 դր.)
64. Իվանյան Արմինե, ք. Երևան (5 քար՝ 1.250 դրամ)
65. Իսիկ Լեյա (1 քար՝ 250 դրամ)
66. Իսախանյան Եվա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
67. Իսրայելյան Նաիրա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
68. Իսրայելյան Սոնա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
69. Խանգաղյան Էմմա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)

- 70. Խաչատրյան Ալլա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
71. Խաչատրյան Արթուր, ք. Երևան (1 քար՝ 250 դրամ)
72. Խաչատրյան Մեսրոպ և Գավիթ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
73. Խաչատրյան Նաիրի, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
74. Կարապետյան Ռաֆայել, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
75. Կարապետյան Ֆելիս, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
76. Կոժմիյան Արամ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
77. Կոստանյան Արման, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
78. Կոռյան Լիլիթ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
79. Կոռյան Լևոն, Լոռու մարզ, ք. Վանաձոր (40 քար՝ 10.000 դրամ)
80. Կոռյան Վահե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
81. Հակոբյան Ասյա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
82. Հակոբյան Արիսա, 4 քարձեկան (20 քար՝ 5.000 դրամ)
83. Հակոբյան Գրեոր և Արմեն, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան (80 քար՝ 20.000 դրամ)
84. Հակոբյան Եվգենի, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան (20 քար՝ 5.000 դրամ)
85. Հակոբյան Հերմինե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
86. Հակոբյան Ռուզ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
87. Հակոբյան Սերբինե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
88. Հարությունյանների ընտանիք, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
89. Հովհաննիսյան Անահիտ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
90. Հովհաննիսյան Աշոտ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
91. Հովհաննիսյան Արամ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
92. Հովհաննիսյան Էմմա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
93. Հովհաննիսյան Սուսաննա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
94. Հովհաննիսյան Տիգրան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դր.)
95. Հովսեփյան Մյուզան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
96. Կազարյան Հովհաննես, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
97. Կազարյան Մարթա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դր.)
98. Կամրայան Նուրբայել, Լոռու մարզ, ք. Վանաձոր (40 քար՝ 10.000 դրամ)
99. Կամրայան Միլենա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
100. Կարապետյան Արամ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
101. Կարապետյան Վարդգես, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
102. Կարապետյան Գալուշ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (10 քար՝ 2.500 դրամ)
103. Կափանյան Արթուր, Լոռու մարզ, ք. Վանաձոր (60 քար՝ 15.000 դրամ)
104. Կափանյան Գոհար, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
105. Կափանյան Գարիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
106. Կուկայան Անի, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
107. Կուկայան Լարիսա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (12 քար՝ 3.000 դրամ)
108. Մարտիրոսյան Արամ, Արմինե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (12 քար՝ 3.000 դրամ)
109. Մարտիրոսյան Նարինե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
110. Մակարյան Հայկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
111. Մակարյան Հարություն, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
112. Մակարյան Մարիամ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
113. Մակարյան Մուշեկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
114. Մակարյան Նարինե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
115. Մակարյան Վարդ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
116. Մակարյան Նուրբայել, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
117. Մաղազյան Մելինե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
118. Մանուկյան Աշոտ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դր.)
119. Մանուկյան Արթուրիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 650 դր.)
120. Մանուկյան Գրեոր, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դրամ)
121. Մանուկյան Միլենա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
122. Մանուկյան Մուշեկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
123. Մանուկյան Վրեժ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
124. Մանուկյան Ջուլիետա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
125. Մարգարյան Անի, ք. Երևան (6 քար՝ 1.500 դրամ)
126. Մարգարյան Միլ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (3 քար՝ 750 դրամ)
127. Մարգարյան Համբիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դրամ)
128. Մարտիրոսյան Ռաֆայել, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
129. Մարտիրոսյան Ռաֆայել, Լոռու մարզ, ք. Վանաձոր (6 քար՝ 1.500 դրամ)
130. Մասցալյան Էդիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դր.)
131. Մելքոնյան Հայկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
132. Մելքոնյան Միլե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
133. Մելքոնյան Անահիտ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դր.)
134. Մելքոնյան Արթուր, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
135. Մեսրոպյան Հայկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
136. Միսկարյան Գևորգ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
137. Միսկարյան Էմմա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
138. Միսկարյան Լարիս, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
139. Միսկարյան Ջրիսիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
140. Միխայիլյան Անահիտ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
141. Միխայիլյան Գեորգիոս, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
142. Միխայիլյան Լիլիթ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 300 դրամ)
143. Միխայիլյան Ռուզ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 1.000 դր.)
144. Միլոյան Գայանե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
145. Միլոյան Կորյուն, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
146. Մկրտչյան Արամ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դր.)
147. Մկրտչյան Արթուր, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
148. Մկրտչյան Արմինե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
149. Մկրտչյան Գավիթ, Ասպիդի, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
150. Մկրտչյան Ռուբեն, Ոսկեհատ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
151. Մովսիսյան Գինո, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
152. Մովսիսյան Հայանիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
153. Մովսիսյան Նուրբայել, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
154. Նազարյան Գուրգեն, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դրամ)

- 155. Նազարյան Նինա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
156. Նալբանդյան Մանե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (9 քար՝ 2.200 դր.)
157. Նիզյան Արայիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
158. Նիզյան Արինե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
159. Նիկողոսյան Հովհաննես, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
160. Շահաբադյան Անի, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
161. Շահաբադյան Արմեն, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
162. Շահաբադյան Լիլիթ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
163. Շահվերդյան Մեդա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
164. Շահվերդյան Տաթև, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դրամ)
165. Շահվերդյան Տիգրան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
166. Շահնազարյան Արմինե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
167. Չարինյան Գևորգ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
168. Չարինյան Մուրեն, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
169. Չարինյան Վահրամիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
170. Չորանյան Աննա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 250 դրամ)
171. Չալազյան Արմինե, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
172. Չալազյան Տիգրան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (40 քար՝ 10.000 դրամ)
173. Չալազյան Գառնիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
174. Չալազյան Սեդրակ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
175. Չալազյան Օլյա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
176. Չալազյան Ֆրունզև, Լոռու մարզ, ք. Վանաձոր (12 քար՝ 3.000 դրամ)
177. Չալազյան Նաոա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
178. Չառավյան Գրիշա և Կոստանյան Կարոլինա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (40 քար՝ 10.000 դր.)
179. Չարսամյան Ալիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
180. Չերտոսյան Արա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դր.)
181. Չերտոսյան Ալվարդ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դր.)
182. Չերտոսյան Գոհար, Լոռու մարզ, ք. Վանաձոր (2 քար՝ 500 դրամ)
183. Չերտոսյան Ռուզան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
184. Չերտոսյան Սեդրակ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (10 քար՝ 2.500 դրամ)
185. Չողոսյան Գեղեցիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քար՝ 5.000 դրամ)
186. Չողոսյան Օտնա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 300 դրամ)
187. Չողոսյան Խաչիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (1 քար՝ 300 դրամ)
188. Չողոսյան Կառլեն, Լոռու մարզ, ք. Վանաձոր (5 քար՝ 1.250 դր.)
189. Ջուլիանյան Արայիկ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
190. Ջուլիանյան Ռաֆայել, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քար՝ 2.000 դրամ)
191. Ռևազյան Օրա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
192. Սարգսյան Էմմա, ք. Երևան (1 քար՝ 250 դրամ)
193. Սարգսյան Լյուս, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
194. Սարգսյան Սուսաննա, Լոռու մարզ, ք. Վանաձոր (4 քար՝ 1.000 դրամ)
195. Սարգսյան Մանե, Լոռու մարզ, ք. Վանա